4. <https://www.landispr.com/ai/media-literacy-in-the-age-of-artificial-intelligence/>

## **ABSTRACT**

### **THE POTENTIAL FOR THE APPLICATION OF ARTIFICIAL INTELLIGENCE AND MEDIA TECHNOLOGIES IN THE CONTEXT OF MEDIA EDUCATION DEVELOPMENT**

**Sandrosyan Tsaghik, Nahapetyan Areknazan**

In the contemporary, rapidly evolving digital age, media literacy has emerged as a crucial competence, equipping citizens with critical thinking abilities and advanced digital skills. The advancement of artificial intelligence (AI) and media technologies generates new opportunities to refine and strengthen the effectiveness of media literacy. This article explores the potential

applications of AI and media technologies within the framework of media education. It underscores the significance of media technologies as a vital instrument for modernizing the educational environment. Furthermore, it delineates both the opportunities and the challenges associated with the integration of innovative technologies into the educational process.

**Keywords:** *artificial intelligence, media technologies, media education, media literacy, digital literacy.*

## **ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂՃԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՅՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **ԱՐԲՐԱՄՅԱՆ ՔՆԱՐԻԿ**

*Հենրիկ Խաչատրյանի անվան թիվ 199 հիմնական դպրոցի ուսուցչուհի*

*Էլ. հասցե՝ [abrahamyanqarik86@gmail.com](mailto:abrahamyanqarik86@gmail.com)*

### **ՄԻՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԳՈՆԸ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԴՄՅ, մ. գ. թ., դոցենտ*

*Էլ. հասցե՝ [mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)*

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում է ՀՀ տարրական դպրոցի մայրենիի դասագրքերի դերը սովորողների ստեղծագործական կարողության զարգացման գործում: Մենք վերլուծել են 2024-25 ուսումնական տարում գործող «Այբբենարան» [5], «Մայրենի 2» [1,6], «Մայրենի 3» [2,3,7] և «Մայրենի 4» [8], դասագրքերը՝ մասնավորապես դիտարկելով դրանցում զետեղված ստեղծագործությունների պատկերազարդումը, հանելուկների, առակների, դերային խաղերի և թեմատիկ պատմությունների նշանակությունը և այլն: Այս նյութերը նպաստում են սովորողների կապակցված խոսքի, երևակայության, տրամաբանական մտածողության, ինքնուրույնության և արժեհամակարգի ձևավորմանը: Այս նպատակով հատկապես ուշադրություն է դարձվում «որպես մասնակից» և «որպես ականատես» պատմելու կարողությունների զարգացմանը: Մեր ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ մեթոդապես ճիշտ

կազմակերպված մայրենիի դասը խթանում է սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը և ստեղծագործական մոտեցումը՝ այն դարձնելով արդյունավետ և գրավիչ:

***Բանալի բառեր՝*** *Ստեղծագործական կարողություն, արժեհամակարգ, տրամաբանական մտածողություն, մայրենիի դասագրքեր, մեթոդական մոտեցումներ:*

Մեր մանկավարժական տարիների փորձով և մագիստրոսական թեզի հիմնախնդրի շուրջ ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունները մեծապես նպաստում են մայրենիի ուսումնական գործընթացի արդիականացմանը, սովորողների ստեղծագործական կարողության, բազմաբնույթ մտածողության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Այս ձեռքբերումներին հատկապես նպաստում է այն, որ դասագրքերում զետեղված ստեղծագործությունների միջոցով սովորողները գիտելիքներ են ձեռք բերում և՛ բնագրով, և՛ նկարներով, և՛ առաձներով ու հանելուկներով, և՛ թատերականացված մեթոդներով, և՛ ճանաչողական, զարգացնող լրացուցիչ նյութերով աշխատելիս:

Սովորողների ստեղծագործական կարողության զարգացման հիմքը դրվում է դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանում: Օրինակ՝ այս շրջանում «Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ» առաջադրանքի համաձայն՝ սովորողներն ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություն են հյուսում նկարի շուրջ՝ գործածելով համապատասխան հիմնաբառեր և հասկացություններ՝ առանձնացնելով ուսումնասիրվող հնչյունը պարունակող բառերը և այլն: Ուսուցչի հանձնարարությամբ սովորողները պատմում են ոչ միայն այբբենարանի նկարում պատկերվածի մասին, այլև ուսուցչի նպատակային հարցերի միջոցով երևակայում են, ստեղծագործում և այլն:

Սովորողների խոսքի զարգացման նպատակով «Այբբենարանում» ներկայացված է «Սևան» նկար-պատմությունը [5, էջ 38]: Նկարում պատկերված է Սևանա լիճը: Հեռվում երևում է Սևանի թերակղզին, երկնքում սպիտակ ամպեր են, թևածում են ուրուրները, լողում են մարդիկ, առագաստանավեր և նավակներ: Մի ձկնորս ձուկ է որսում: Անտառի եզրին փոքրիկ վրաններ են խփված: Լողափում հանգստացողները գնդակ են խաղում: Այս բնույթի նկարներն առաջին հերթին նպատակաուղղված են գրաճանաչության դասի նկատմամբ սովորողների հետաքրքրության բորբոքմանը, խոսքի, ստեղծագործական երևակայության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, աշխարհաճանաչողական գիտելիքների յուրացմանը, բնագրի և նկարազարդման

կապերի հայտնաբերմանը, վերլուծությանը և այլն: Քննարկվող «Այբբենարանում» զետեղված են նաև բնության մասին փոքրածավալ ստեղծագործություններ, որոնց ընթերցումն ու վերարտադրումը հնարավորություն է տալիս ոչ միայն զարգացնել սովորողների պատմելու կարողությունը, այլև ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը:

«Մայրենի 2» դասագրքում [6] բազմաթիվ են այդպիսի նկարները, որոնց շուրջ սովորողներին հանձնարարում ենք պատմություններ հյուսել կենդանիների, մարդկանց, նրանց կենցաղի, բնավորության, գործունեության ձևերի, կարդացած ստեղծագործությունների հերոսների, տարբեր առարկաների, բույսերի և այլնի մասին:

Սովորողների հյուսած պատմությունները գնահատելիս հաշվի ենք առնում նրանց երևակայելու ունակությունն ու արագությունը, կերպարների ու նրանց գործողությունների ինքնատիպությունը, մտքերի յուրօրինակությունը, պատկերացումների հարստությունը, կերպարները բնութագրող մանրամասների առկայությունը, դրանց հուզականությունը, գործածած բառապաշարն ու դրանց դիպուկությունը և այլն: Օրինակ՝ «Ում ծառն է» ստեղծագործության վերջում կա առաջադրանք, ըստ որի պետք է բեմականացնել խնդուկը: Ուսուցչի հանձնարարությամբ սովորողները բաժանվում են խմբերի, կարդում խնդուկը, այնուհետև բաշխում են դերերը և բեմականացնում:

«Մայրենի 2» դասագրքում զետեղված ստեղծագործությունները հիմնականում նկարագարոյ են: Դրանք նպաստում են ուսումնական նյութի նկատմամբ սովորողների շուրջ մեթոդապես լուրջ աշխատանք իրականացնելու դեպքում հետաքրքրության առաջացմանը, բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական ունակությունների դրսևորմանն ու զարգացմանը: Դասագիրքն սկսվում է «Բարև, ե՛ս եմ» ստեղծագործությամբ, որը զարգացնում է «որպես մասնակից» պատմելու սովորողների կարողությունը [6, էջ 6]:

«Մայրենի 2» դասագրքի՝ «Ինչպես ենք մենք ինքնակատարելագործվում» թեմատիկ խումբն ուսումնասիրելիս մենք «որպես մասնակից» սովորողների պատմելու կարողությունը զարգացնելու նպատակով կազմակերպեցինք դերային խաղեր, ինչպես նաև սովորողները ստեղծագործության դիպաշարը ներկայացրին ականատեսի աչքերով [6, էջ 33-54 ]:

«Մայրենի 2» դասագրքում զետեղված ստեղծագործությունների նկարագարողումները սովորողներին տալիս են կարդացած ստեղծագործության բովանդակության մասին ավելի լավ պատկերացում կազմելու հնարավորություն և

Նպաստում են նրանց տրամաբանական մտածողության, ծագած խնդիրը մինչև վերջ լուծելու կամքի և համառության, երևակայության և վերացական մտածողության զարգացմանը: Նշված դասագրքի թեմատիկ խմբերում տեղ գտած պատմվածքները շատ հետաքրքիր են, նրանց բովանդակության և դիպաշարի շուրջ մեթոդապես ճիշտ աշխատանքը նաև մեծապես նպաստում է սովորողների արժեհամակարգի բաղադրիչների զարգացմանը: Առանձնացնենք Ջ. Ռոդարիի «Մեկ և յոթ» պատմվածքը, որի ուսումնասիրման ընթացքում ոչ միայն զարգացնում է սովորողների կապակցված խոսքը, այլև ստեղծագործական, երևակայական մտածողությունը և արագ կողմնորոշվելու կարողությունը [1, էջ 47]:

Մայրենիի դասագրքերի նյութերի շուրջ զանազան մեթոդական հնարների միջոցով կարելի է աշխատանքն այնպես կազմակերպել, որ սովորողներն առավել ինքնուրույնություն ցուցաբերեն ստեղծագործությունները վերարտադրելիս՝ դիտարկելով այն բազմակողմանիորեն ու մանրամասներով, որքան հնարավոր է պատմելով, չկառչելով միայն ստեղծագործության բառերից: Սա նպաստում է ոչ միայն նրանց ստեղծագործական երևակայության, այլև ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: «Մայրենի 3» [7] դասագրքի «Ինչպես ենք մենք ինքնակազմակերպվում» թեմատիկ խմբից մենք առանձնացրել ենք սովորողների մտածողությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը զարգացնող շուտասելուկները, առածները, առակները, առակները, որոնք նպաստում են սովորողների բարոյական որակների զարգացմանը [7, էջ 43-87]: Դրանց շուրջ աշխատանքների ընթացքում իրականացվող գործունեությունը սովորողներից պահանջում է ոչ միայն որոշակի գիտելիքներ, դիտունակություն, այլև արագ կողմնորոշվելու, մտքերը դիպուկ ձևակերպելու կարողություններ, հումորի զգացում և այլն: Այսպիսի ստեղծագործությունների շուրջ աշխատանքը նպաստում է սովորողների ինքնուրույնությանը, գրագետ խոսք կառուցելու կարողության զարգացմանը, նրանք վերահսկում են իրենց կատարած աշխատանքը, հանգում անհրաժեշտ հետևությունների, բավարարում իրենց բնածին հետաքրքրությունները, բերկրանք ապրում իրենց գործունեության արդյունքով և այլն:

«Մայրենի 3» [3, էջ 6-37] դասագրքի «Ինչպես է «աշխատում» աշխարհը» թեմատիկ խմբում զետեղված են բնության երևույթների մասին ստեղծագործություններ, որոնք սովորողները մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ են ուսումնասիրում: Այս թեմատիկ խմբում հատկապես ուշագրավ են «Անտառն ու քամին» և «Ինչու է երկինքը ծիածան կապում» ստեղծագործությունները, որոնց շուրջ աշխատանքը նպաստեց

սովորողների ստեղծագործական և պատմելու կարողությունների զարգացմանը, հարստացավ նրանց ակտիվ բառապաշարը [3, էջ 9, 25-28]: Այս ստեղծագործությունների բովանդակությունն ամրապնդելիս սովորողներին երկու խմբի բաժանեցինք: Մի խումբը ստեղծագործության բովանդակությունը ներկայացրեց ականատեսի, իսկ մյուսը՝ մասնակցի աչքերով: Այս գործընթացում սովորողներն անկաշկանդ հորինում էին ու ներկայացնում այնպիսի տրամաբանական դիպաշար, որ որ ունկնդիր դասընկերները, արագ, կարճ ժամանակում կարողանում էին ոչ միայն ըմբռնել նյութը, այլև շարունակել ընկերների ստեղծագործական մտքերը:

Այս ստեղծագործությունների ուսումնասիրումից հետո սովորողներին հանձնարարեցինք հյուսել ջրի, անձրևի, փաթիլի մասին հեքիաթներ:

«Որտեղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ» թեմատիկ խմբի՝ «Չրույցներ նշանավոր մարդկանց մասին», ստեղծագործությունները նպատակաուղղված են սովորողների ստեղծագործական երևակայության ու մտածողության զարգացմանը, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքները ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելու կարողության զարգացմանը [3, էջ 17-31]:

«Մայրենի 4» դասագրքում [8] զետեղված են սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը, լեզվական օրինաչափությունների յուրացմանը նպաստող ստեղծագործություններ և դրանց կից՝ վարժություններ ու առաջադրանքներ, որոնք նպաստում են սովորողների ստեղծագործական կարողության զարգացմանը:

Ի տարբերություն նախորդ դասարանների մայրենիի դասագրքերի՝ «Մայրենի 4» դասագիրքն ավելի լայն ստեղծագործական հնարավորություններ ունի. ներկայացված ստեղծագործությունները, մեր կարծիքով, ավելի հետաքրքիր են և ունեն ընդարձակ տեղեկատվական բնույթ, ինչն էլ նպաստում է և՛ նոր գիտելիքների ձեռքբերմանը, և՛ բառապաշարի հարստացմանը: Նշված դասագրքում զետեղված ստեղծագործությունները ձևավորում են սովորողների արժեհամակարգը և զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները: Դրանց թվում են Մարտիրոս Սարյանի, Արամ Խաչատրյանի մասին պատմվածքները, ինչպես նաև ստեղծագործություններ, որոնք նվիրված են մայրերին ու հայրերին: Նման դասանյութերի ուսումնասիրության ժամանակ սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարվում է նկարագրել իրենց ծնողներին: Այս աշխատանքը շատ հետաքրքրում և ոգևորում է կրտսեր դպրոցականներին, նրանց մղում է ազատ ստեղծագործելու, նպաստում է արժեհամակարգի բաղադրիչների զարգացմանը:

Մայրենիի ժամանակակից դասագրքերն ունեն սովորողների ստեղծագործական կարողությունը զարգացնելու ընդարձակ հնարավորություն: Այս հանգամանքը մայրենիի դասագործընթացը դարձնում է հետաքրքրաշարժ, բավարարվում են սովորողների ոչ միայն ուսումնական դրդապատճառները, այլև աճում է մայրենի լեզվի, նրա օրինաչափությունների և կիրառման ոլորտների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, դասի գործընթացում մեծանում է նրանց ակտիվությունը:

ՀՀ տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում գետեղված ստեղծագործությունները մեթոդապես ճիշտ ուսումնասիրելու դեպքում սովորողները մղվում են ստեղծագործական գործունեության, ծավալում մտածական գործունեություն, հանգում ինքնուրույն եզրակացությունների. դրսևորում են ակտիվ աշխատելու, համագործակցելու ցանկություն: Արդյունքում, զարգանում են նրանց ստեղծագործական, որոնողական կարողությունները, հետաքրքրություն է ձևավորվում ուսումնասիրվող նյութի նկատմամբ, ինչպես նաև զարգանում է պատմելու կարողությունը:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Արևաուդյան Ա., Մանուկյան Մ. «Մայրենի 2», Երևան, «Էդիթ Պրինտ», 2023, Մաս 2, 96 էջ:
2. Բալայան Ա., Զիբուխյան Կ. «Մայրենի 3», Երևան, «Չանգակ» հրատ., 2024, Մաս 1, 104 էջ:
3. Բալայան Ա., Զիբուխյան Կ. «Մայրենի 3», Երևան, «Չանգակ» հրատ., 2024, Մաս 2, 116 էջ:
4. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., Չանգակ-97, 2018, 341 էջ:
5. Սարգսյան Վ., «Այբբենարան», Երևան, «Մանմար», 2022, 156 էջ:
6. Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 2», «Հեղինակային հրատ.», Երևան, 2024, 176 էջ:
7. Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 3», Եր., «Հեղինակային հրատ.», 2024, 228 էջ:
8. Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 4», Երևան, Մանմար, Արմենիա, 2022, 176 էջ:

### **РЕЗЮМЕ**

### **ВОЗМОЖНОСТИ УЧЕБНИКОВ РОДНОГО ЯЗЫКА ДЛЯ РАЗВИТИЯ ТВОРЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ**

В статье рассматривается роль учебников по родному языку начальной школы Республики Армения в развитии творческих способностей учащихся. Анализируются учебные пособия «Айббенаран», «Майрени 2», «Майрени 3» и «Майрени 4», с акцентом на значение иллюстрированных произведений, загадок, басен, ролевых игр и тематических рассказов, включённых в их содержание. Эти материалы способствуют развитию речи, воображения, логического мышления, самостоятельности и системы ценностей учащихся. Особое внимание уделяется формированию навыков повествования от первого лица - как участника и от третьего лица-как очевидца. В тексте подчёркивается, что методически грамотно организованное обучение стимулирует активность, интерес и творческий подход учащихся, делая изучение родного языка эффективным и увлекательным.

***Ключевые слова:** творческие способности, система ценностей, логическое мышление, учебники родного языка, методические подходы.*

## **ԽԱՂԻ ԴԵՐԻ ՆՎԱԶՈՒՄԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

### **ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, Սկզբնական կրթության ֆակուլտետ, ԲԿԾԱ 4-րդ  
կուրս*

*Էլ. հասցե՝ [khudaverdyananahit-8@aspu.am](mailto:khudaverdyananahit-8@aspu.am)*

### **ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, մ. գ. թ., դոցենտ*

*Էլ. հասցե՝ [martirosyannaira40@aspu.am](mailto:martirosyannaira40@aspu.am)*

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Ժամանակակից թվայնացված իրականության պայմաններում նկատվում է ավանդական խաղերի դերի նվազում, ինչը բացասաբար է անդրադառնում երեխայի

համակողմանի զարգացման, սոցիալականացման վրա: Խաղի պակասը խոչընդոտում է երեխայի ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և ճանաչողական ոլորտների ձևավորմանը՝ նպաստելով մեկուսացման, ինքնագնահատականի անկման, խոսքի հետընթացի և շարժողական խնդիրների առաջացմանը: Հոգվածում վերլուծել ենք հիմնախնդրի առաջացման հիմնական պատճառները՝ թվային տեխնոլոգիաների գերակայություն, ծնողների հետ հուզական կապի շփման բացակայություն, ուսումնական ծանրաբեռնվածություն, խաղային միջավայրի սահմանափակում և այլն: Առաջարկում ենք խաղային գործունեության վերականգնման հնարավոր ուղիներ, այդ թվում՝ խաղահեն ուսուցում, ծնողական իրազեկում, կրթական քաղաքականության վերանայում: Խաղը ներկայացվում է որպես երեխայի զարգացման առանցքային հենասյուն, որի վերականգնումը հրատապ անհրաժեշտություն է:

***Բանալի բառեր՝ խաղ, երեխա, զարգացում, թվայնացում, խաղային միջավայր, սոցիալականացում, հմտություններ, հաղթահարում:***

Ժամանակակից աշխարհում արագացված տեխնոլոգիական զարգացումները, հասարակական և մշակութային կառուցվածքների փոփոխություններն էական ազդեցություն են ունենում մարդկային կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ կրթության, ընտանիքի և հատկապես երեխայի զարգացման գործընթացների վրա: Այս համատեքստում վերջին տարիներին նկատվում է մի մտահոգիչ միտում՝ խաղի դերի նվազումը երեխայի կյանքում:

Խաղը դեռևս վաղ մանկությունից ոչ միայն ժամանցի, այլև ճանաչողության, սոցիալականացման, ինքնարտահայտման, հոգեբանական կայացման և կյանքին նախապատրաստվելու հիմնարար միջոց է: Այն ոչ միանշանակորեն տարբերվում է երեխայի ծավալած մյուս գործունեությունների ձևերից նրանով, որ նրա համար խաղը ինչ-որ արդյունքի հասնելու նպատակ չէ, այլ ինքնին՝ գործընթացից հաճույք ստանալու ինքնաբուխ գործողություն, որն ունի խոր մանկավարժական և հոգեբանական իմաստ [5, էջ 47]:

Խաղային գործունեության միջոցով զարգանում են երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, սոցիալական հարմարվողականությունը, երևակայությունը, խոսքը, տրամաբանությունը, մտածողությունը, որոշումներ կայացնելու հմտությունները և այլն: [2, էջ 91]: Այն փոքրիկին հնարավորություն է տալիս ոչ միայն աշխարհն ընկալելու, այլև իր տեղը որոշելու այդ աշխարհի մեջ: Լ. Վիգոտսկու տեսության համաձայն՝ խաղը **ընկալելու**

«մոտակա զարգացման գոտու» առանցքային տարր է, որի ընթացքում երեխան դրսևորում է վարքի այնպիսի ձևեր, որոնք գերազանցում են իր առօրյա մակարդակը [3, էջ 65]: Ժան Պիաժեն խաղը դիտում էր որպես ինտելեկտուալ հասունացման փուլ, որի ժամանակ երեխան ճանաչում է իրականությունը՝ մոդելավորելով այն իր վարքի միջոցով [5, էջ 36]: Եթե նախկինում երեխաները ժամեր շարունակ անցկացնում են շարժախաղերով, այսօր նրանց ազատ ժամանակի զգալի մասը ծախսվում է թվային սարքերի հետ՝ սմարթֆոններ, պլանշետներ, համակարգչային խաղեր և այլն: Նման տեխնոլոգիական գերակայությունը բացասական է անդրադառնում երեխաների ոչ միայն ֆիզիկական ակտիվության, այլ նաև՝ նրանց հուզական, սոցիալական և ճանաչողական դաշտերի վրա:

Խաղի նվազման պատճառները բազմաշերտ են: Նախ՝ նշենք թվային աշխարհի ներխուժումը երեխայի առօրյա: Ժամանակակից ծնողների մի զգալի հատված, աշխատելով գերզբաղված գրաֆիկով, չի հասցնում կազմակերպել երեխայի բնականոն խաղային միջավայրը՝ նրան որպես «լռեցման» միջոց տրամադրելով տեխնիկա: Սա հանգեցնում է նրան, որ երեխան փոխազդում է սարքի, այլ ոչ թե իրական աշխարհի և իրական մարդու հետ: Երկրորդ՝ քաղաքային միջավայրում երեխայի ֆիզիկական ակտիվությունն ապահովող տարածքների սահմանափակումը, խաղահրապարակների պակասը և ծնողական վախերը (անվտանգություն, միջավայրի հարմար չլինելը) էլ ավելի են սահմանափակում խաղային գործունեության ազատությունը: Երրորդ՝ կրթական համակարգում երեխայի ծանրաբեռնվածության աճը ևս ժամանակ և էներգիա է խլում խաղային գործունեության համար: Դպրոցում սովորողները հաճախ մասնակցում են բազմաթիվ արտադասարանական խմբակների, թեստերի, մրցույթների, ինչը կասեցնում է նրանց ազատ և ինքնաբերական զարգացող վարքը [1, էջ 55]:

Անառարկելի է, որ խաղի դերի նահանջը բացասաբար է ազդում երեխայի բազմակողմանի զարգացման վրա: Այն երեխաները, որոնք զրկված են խաղային լիարժեք հնարավորությունից, հաճախ դրսևորում են խոսքի հետընթաց, սոցիալական մեկուսացում, հուզական անկայունություն, շարժողական խնդիրներ և այլն: Դերային խաղերի պակասի դեպքում խաթարվում է երեխայի սոցիալական իմաստավորումը, երևակայական աշխարհների ձևավորումը, ինչը հետագայում անդրադառնում է նաև մասնագիտական կողմնորոշման վրա: Այդ խաղերի միջոցով տեղծվում էր պատկերացումներ ուսուցիչ-աշակերտ, ինչպես նաև բժիշկ-հիվանդ -փոխհարաբերությունների մասին, եթե երբեմնի երեխաները խաղում էին

«դպրոց-դպրոց», «բժիշկ-բժիշկ» ու դրանցով արդեն հոգեբանական կապ էին ստեղծում դերերի, պարտականությունների և սոցիալական իրականության հետ, ապա այժմ մենք ունենք շատ երեխաներ, ովքեր խաղում են միայն վիրտուալ տարածքներում՝ առանց կենսական էմոցիոնալ հետք թողնելու այդ խաղերում [7, էջ 61]:

Խաղի դերի նվազման մի այլ ցավալի հետևանք է երեխայի ինքնագնահատականի անկումը: Խաղի ժամանակ, երբ երեխան հաղթում է, պարտվում, փորձում է նորից, նա սովորում է դիմակայել ձախողմանը, սովորում է սպասել հերթին, ընդունել պարտությունը, հանդուրժել ուրիշի հաղթանակը և այլն: Այս հոգեբանական փորձառությունը, որն իր տեսքով «անկարևոր» է թվում, հիմք է դառնում հետագա կյանքի դժվարություններին դիմակայելու համար հիմք է դառնում:

Երեխայի գործունեության ձևերի մեջ խաղի պակասը նաև նվազեցնում է նրա ստեղծագործական միտքը: Երբ նա իր ձեռքերով լեզուներից է «ամրոց» պատրաստում, նկարում է մի տուն, երգում է ու բեմադրում, նա իրականում ստեղծում է իր աշխարհը՝ դառնալով այդ աշխարհի ճարտարապետը: Այդ աշխարհում նա ինքն է ընտրում, որոշում, ընկալում և ապրում: Եվ երբ մենք՝ մեծերս, արգելում ենք նրան խաղալ կամ միայնակ թողնում սարքի առջև, մենք նրան զրկում ենք ոչ միայն հաճույքից, այլ նաև՝ ինքն իրեն ճանաչելու, զարգանալու և ապրելու հնարավորություններից:

Խաղի դերի նվազման հետևանքների հաղթահարման համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում: Այս առնչությամբ առաջարկվող հիմնական ուղիները հետևյալն են.

1. *Խաղային ուսուցման ինտեգրում կրթական ծրագրերում:* Խաղը պետք է դառնա ուսուցման կարևոր բաղադրիչ նախակրթարանում և տարրական դպրոցում: Դիդակտիկ և դերային խաղերը նպաստում են մանկան ճանաչողական և սոցիալական հմտությունների զարգացմանը՝ նվազեցնելով ուսումնական ծանրաբեռնվածությունը:
2. *Շնորհների և մանկավարժների իրազեկման մակարդակի բարձրացում:* Շնորհներն ու ուսուցիչները պետք է հասկանան խաղի կարևորությունը և այն ընկալեն ոչ թե որպես «ժամանակի կորուստ», այլ՝ որպես երեխայի զարգացման հիմնական գործիք: Իրազեկման ծրագրերը և սեմինարները կօգնեն խթանել այդ մշակույթը:
3. *Խաղային միջավայրերի բարելավում:* Համայնքներում պետք է ստեղծվեն անվտանգ, հարմար խաղահրապարակներ և բաց տարածքներ, որտեղ երեխաները կկարողանան ազատ ու անվտանգ խաղալ:

4. *Պետական քաղաքականության և օրենսդրության կատարելագործում:* Խաղի իրավունքների պաշտպանության նպատակով անհրաժեշտ է մշակել ուղիներ և ստեղծել արդյունավետ մեխանիզմներ, որոնք կնպաստեն երեխաների լիարժեք խաղային գործունեության խթանմանը:

Բազային խաղերը կարևոր նշանակություն ունեն երեխաների ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական զարգացման գործընթացում. դրանք զարգացնում են նրանց հաղորդակցական, թիմային համագործակցության կարողությունները, կամային որակները՝ նպաստելով 21-րդ դարի պահանջվող փափուկ հմտությունների ձևավորմանը: Սակայն մեր իրականացրած ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ ժամանակակից բակերում գրեթե չեն հանդիպում խաղացող երեխաներ. առկա են միայն փոքր խմբեր, որոնք էլ հիմնականում զբաղված են ոչ թե խաղով, այլ անորակ հեռուստասերիալների և թվային բովանդակության քննարկմամբ: Այս փաստը վկայում է այն մասին, որ երեխաների միջավայրում նվազել է կենդանի շփումը, սահմանափակվել են խաղային փորձառությունները և դանդաղում է նրանց սոցիալական ու ստեղծարար հմտությունների ձևավորումը:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ մանկավարժական համակարգում խաղային ուսուցումը պետք է լինի ոչ թե լրացուցիչ, այլ հիմնական մոտեցում, հատկապես՝ նախակրթարանում և տարրական դպրոցում: Խաղային մեթոդները, դերային դասերը, դիդակտիկ և իրադրային խաղերը կարող են մեծապես նպաստել գիտելիքների յուրացմանը՝ առանց երեխաներին ծանրաբեռնելու: Մեծերի՝ հատկապես ծնողների և մանկավարժների համար անհրաժեշտ է կազմակերպել իրազեկման ծրագրեր՝ խաղի կարևորության մասին, որպեսզի նրանք խաղը չընկալեն որպես «ժամանակի կորուստ», այլ որպես առաջնային զարգացման գործիք [1, էջ 97]:

Այս ամենից գատնաբար պետության մակարդակով անհրաժեշտ է մշակել մանկական քաղաքականություն, որը ներառում է խաղային իրավունքների պաշտպանություն: Հիշենք՝ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների կոնվենցիան» ևս սահմանում է երեխայի՝ խաղալու իրավունքը [6, հոդված 31]: Պարտավոր ենք ապահովել խաղային աշխարհին երեխայի մոտ լինելու հնարավորությունը: Այն պահանջում է հանրային մտածողության փոփոխություն՝ երեխայի զարգացման մակարդակը չափել ոչ թե միայն գնահատականներով կամ օլիմպիադաներով, այլ նայել նրան որպես անձ, ում համար խաղը նույնքան անհրաժեշտ է, որքան սնունդը կամ քունը:

Այսպիսով՝ խաղի բարձրամակարդակ դերի վերականգնումը երեխայի կյանքում հրատապ խնդիր է: Այն մարտահրավեր է կրթության, ընտանիքի, հանրային տարածքի,

արժեքային դաշտի համար: Եթե ցանկանում ենք ունենալ ստեղծագործ, ուժեղ, առողջ, սոցիալապես հարմարված և հուզականորեն կայուն քաղաքացիներ, պետք է այսօր «վերադարձնենք» խաղը՝ ոչ միայն բակերին, այլև մեր մանկավարժությանը, մեր մտածողությանը: Երեխան պետք է խաղա՝ որպեսզի մեծանա, իսկ մենք՝ մեծերս, պետք է աջակցենք նրան այդ ճանապարհին:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Բոժովիչ Լ.Ի. (1968). – Անձի ձևավորումը մանկության շրջանում, Երևան, 412 էջ:
2. Էլկոնին Դ.Բ. – Խաղի հոգեբանություն, Եր., 1975, 104 էջ :
3. Պիաժե Ժ. (1962). Խաղ, երազ և ընդօրինակում մանկության շրջանում: Երևան, «Հայաստան» հրատարակչություն, էջ 21:
4. Վիգոտսկի Լ.Ս. (1978). Մտքի զարգացումը և հոգեբանական գործընթացները մանկության շրջանում: Մոսկվա՝ Պրոգրեսս հրատարակչություն, էջ 182:
5. Սահակյան Ա.Ս. (2005). Մանկավարժություն. Երևան, էջ 230:
6. ՄԱԿ (1989). Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա: Հոդված 31:
7. Singer, D.G., Golinkoff, R.M., & Hirsh-Pasek, K. (2006). Play=Learning: How Play Motivates and Enhances Children’s Cognitive and Social-Emotional Growth. Oxford University Press, 288 pages.

## **SUMMARY**

### **REDUCING THE ROLE OF PLAY IN THE CHILD'S DEVELOPMENT PROCESS AND WAYS TO OVERCOME ITS CONSEQUENCES**

**Khudaverdyan Anahit, Martirosyan Naira**

The article examines the decline of play’s role in the child development process and explores effective ways to overcome its negative consequences. In today’s digital era, children increasingly spend less time engaging in traditional play, which is essential for their physical, cognitive, emotional, and social growth. This reduction negatively affects speech development, social skills, emotional stability, and motor abilities. The study analyzes the main causes behind this trend, such as technological dominance, limited play environments, and increased academic demands. It also emphasizes the importance of play as a fundamental tool for fostering creativity, independence, and social interaction. Finally, the article proposes practical strategies to restore play in children’s daily

lives, including play-based learning methods, parental awareness programs, and improved access to safe play spaces. Ensuring children's right to play, as highlighted by the UN Convention on the Rights of the Child, is vital for their holistic development.

**Keywords:** *play, child, development, digitalization, play environment, socialization, skills, overcoming.*

## **ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԱԽՈՍԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

### **ԳԱԼՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿ ՄԿԾԱ, 2-րդ կուրս*

**Էլ. հասցե՝** [galstyanalilit-8@aspu.am](mailto:galstyanalilit-8@aspu.am)

### **ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԻՐԱՐՓԻ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿ ՄԿԾԱ, մ.գ.թ., դոցենտ*

**Էլ. հասցե՝** [Khachatryansirarpi42@aspu.am](mailto:Khachatryansirarpi42@aspu.am)

### **ԱՄՓՈՓՈԼՍ**

Մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկը սովորողների գրավոր խոսքի մշակումն է, գրելու կարողության զարգացումը, քանի որ գրության և արտասանության մասնակի անհամապատասխանության հետևանքով առաջ են գալիս ճիշտ գրելու և գրածը ճիշտ կարդալու որոշ դժվարություններ: Մեր ուսումնասիրության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցի առարկայական չափորոշչով ու մայրենիի ծրագրերով նախատեսված սովորողների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների միջև առկա հակասությամբ:

**Բանալի բառեր՝** տարրական դպրոց, ուղղագրական և ուղղախոսական կարողություններ, վարժություններ, գրավոր խոսք, առաջադրանքների համալիր:

Տարրական դասարաններում առանց ուղղագրական տարրական գիտելիքների յուրացման և ամրակայման մտքերը գրագետ արտահայտելու վերջնարդյունքի կատարումը հնարավոր չէ պատկերացնել: Ուղղագրական և ուղղախոսական կարողությունները տարրական դպրոցում արդյունավետորեն կմշակվեն և կդառնան սովորողների սեփականությունը, ոչ թե առանձին բառերը ճիշտ գրելու ուղղությամբ աշխատանք իրականացնելով, այլ մեկ ընդհանուր կանոնին վերաբերող տարաբնույթ վարժությունների գիտակցական կատարման ճանապարհով: Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը, որպես պահանջ, միշտ էլ իր որոշակի տեղն ու դերն է ունեցել մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում: Այս խնդիրների լուծման արդյունավետ եղանակներն են սովորողների թույլ տված ուղղագրական սխալների ճիշտ դասակարգումը և դրանք կանխելու համար կազմակերպվող աշխատանքը:

Կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների մակարդակի բացահայտման նպատակով հետազոտություն իրականացրինք Երևանի Լև Տոլստոյի անվան հ. 128 դպրոցի 2-րդ դասարանում: Սովորողներին հանձնարարեցինք **բացատրական թելադրություն**: Թելադրվեց «Ընկուզենին» տեքստը:

### **Նպատակը և խնդիրները՝**

- ✓ Անցած ուղղագրական կանոնների վերհիշում, կրկնություն:
- ✓ Թելադրվող նյութի բովանդակության իմաստավորում՝ վերլուծություն:
- ✓ Ուղղախոսական ունակությունների զարգացում
- ✓ Թելադրություն գրելու կարողության զարգացում:

**Խթանման փուլում** ընթերցեցինք թելադրության բնագիրը՝ նյութի բովանդակության ընկալման նպատակով:

Երկրորդ ընթերցումից հետո նյութից առանձնացրինք այն բոլոր բառերը, որոնք ուղղագրական դժվարություն են ներկայացնում, ապա սովորողները կրկնեցին անհրաժեշտ ուղղագրական կանոնները և բացատրեցին այդ բառերի ճիշտ գրության ձևը:

**Խմաստի ընկալման փուլում** կատարեցինք մատները գրելուն նախապատրաստող վարժություններ, ապա թելադրեցինք բնագիրը:


Թելադրության ավարտից հետո մեկ անգամ ևս կարդացինք բնագիրն ամբողջությամբ, ստուգեցինք, այնուհետև, սովորողներին հանձնարարեցինք բնագրից դուրս գրել ուղղագրական արժեք ներկայացնող բառերը և դրանք գործածել բառակապակցությունների մեջ:

**Կշռադատման փուլ** կատարեցինք ինքնաստուգում և գրավորների հանձնում:

**Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝** հանգեցինք այն եզրակացության, որ սովորողների ուղղագրական կարողությունների զարգացան ուղղությամբ դեռևս զգալի աշխատանք պիտի կատարվի:

Ուղղագրության ուսուցման արդյունավետ հնարներից մեկը բառի կազմության ուսումնասիրումն է, նրա բաղադրիչների իմաստի բացատրությունը, ինչպես նաև նախադասության մեջ բառի գործածումը, որը մեծապես նպաստում է սովորողների ուղղագրական հմտությունների զարգացմանը և բառապաշարի հարստացմանը: Հայտնի է, որ բառի ուղղագրությունն ստուգելու օգտակար հնար է դրա թեքումը: Սովորողներին պետք է սովորեցնել բառի ուղղագրության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում թեքել այն, օրինակ՝ *փախչել-փախա, խիղճ-խղճալ* և այլն: Ուղղագրական այս կամ այն կանոնի վերաբերյալ սովորողների գիտելիքների ամրապնդան արդյունավետ հնար է նաև խմբային աշխատանքը, որը նպաստում է սովորողների մտածողության ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր ու աշխույժ դարձնելուն:

Տրամագիր 1.



Ուսումնասիրության արդյունքները վերլուծելուց (Տրամագիր 1.), նրանց թույլ տված սխալները դասակարգելուց հետո մշակեցինք և կիրառեցինք կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունների հետևյալ համակարգը.

### 🌟 **Վարժություն 1.**

**Վարժության ընթացքը:** Աշխատանք զույգերով:

Սովորողներին բաժանեցինք քարտեր (յուրաքանչյուր զույգին՝ 1-ական քարտ), որտեղ գետեղված էին բաղաձայնների ուղղագրությանը և ուղղախոսությանը վերաբերող բառեր (յուրաքանչյուր քարտում 6-7 բառ): Ըստ առաջադրանքի՝ նրանք պետք է լրացնեին բաց թողնված տառերը, այնուհետև դրանից երկուսը գործածեին նախադասությունների մեջ, ապա բարձրաձայն կարդային՝ ուշադրություն դարձնելով ուղղախոսությանը:

|                                                                               |                                                    |                                                                                   |                                                                                  |
|-------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------|
| Քարտ 1.<br>համ . ուրել<br>խն . րել<br><br>մե .<br>ոսկեզ .<br>ծ միան<br>. ամից | Քարտ 2.<br>. պԱսել<br>բԱղվել<br>. տապել<br>գ. րկել | Քարտ 3.<br>ե . բայր<br>առ . և<br>բր . ոտ<br>նա .<br>շուն մր .<br>յուն փոր<br>. ել | Քարտ 4.<br>ող . ունել<br>վեր .<br>ապես վար<br>. ել առա .<br>թռ . ել<br>դար . նել |
|-------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------|


🌟 **Վարժություն 2. Վարժության ընթացքը:** Գրատախտակին գրեցինք ուղղագրական արժեք ունեցող հետևյալ բառերը՝ *սրբիչ, ոսկի, ավագ, տարօրինակ, արդար, փորձել, խաբել*: Հանձնարարվեց ուշադիր կարդալ այդ բառերը և մտապահել: 2-3 րոպե անց մաքրեցինք գրատախտակը և թելադրեցինք բառերը:

🌟 **Վարժություն 3. Վարժության ընթացքը:** Մեր հանձնարարությամբ սովորողները շրջան կազմեցին: Նրանք ստացան մեկ գնդակ և ըստ ուսուցչի հրահանգի՝ փոխանցեցին միմյանց՝ յուրաքանչյուրն արտասանելով ուղղագրական արժեք ունեցող մեկ բառ, բացատրելով դրանց

արտասանության և գրության ճիշտ ձևերը:

✚ **Վարժություն 4. Վարժության ընթացքը:** Սովորողներից մեկը՝ ուսուցչի հանձնարարությամբ պարկից հանեց և հաջորդաբար դասարանին ցուցադրեց մի քանի բառ: Սովորողները ազդանշանային կարմիր քարտ բարձրացրին այն բառերի ցուցադրման ժամանակ, որոնք սխալ էին գրված, իսկ ճիշտ գրված բառերի դեպքում՝ կանաչ քարտ:

✚ **Վարժություն 5. Վարժության ընթացքը:** Սովորողներին բաժանեցինք նախօրոք ընտրված ուղղագրական և ուղղախոսական արժեք ունեցող բառեր պարունակող բնագիր: Հանձնարարվեց ընդգծել այդ բառերը և բացատրել, թե որոնք են այդ բառերի ուղղագրական և ուղղախոսական առանձնահատկությունները:




*Օգոստոսն արագ անցավ: Եկավ ոսկեգոծ աշունը: Անընդհատ մաղում է մանրահատ անձրևը: Երփներանգ տերևները թափվում են վար: Ամեն ինչ լռել է: Անորոշ մի թախիժ պարուրել է օդը: Դա նրանից է, որ էլ չեն երևում թռչունները, չի լսվում հորդառատ գետի ուրախ ձայնը: Մարդիկ էլ են դարձել քչախոս ու մտահոգ: Նրանք զբաղված են իրենց հոգսերով, քանի որ մոտենում է ձմեռը:*

✚ **Վարժություն 6. Վարժության ընթացքը:**

Գրատախտակին փակցրեցինք թղթեր, որտեղ գրված բառերի մեջ տառեր են բաց թողնված: Սովորողներին հանձնարարվեց վերցնել թղթերի վրա գրված անհրաժեշտ տառերը և տեղադրել բառերի մեջ:

Այսպիսով, ամփոփելով ողջ կիսամյակի ընթացքում քննարկվող հիմնախնդրի ուղղությամբ կատարած մեր աշխատանք, համոզվեցինք, որ կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների ձեռք բերման գործընթացում չափազանց կարևոր է, թե ուսուցիչն ինչ մեթոդներ է կիրառում այս ունակությունների զարգացման և դրանք հմտության վերածելու համար, սովորողներն ինչպիսի ուղղագրական և ուղղախոսական վարժություններ են կատարում, ինչպես է կազմակերպվում սովորողների թույլ տված սխալների

ուղղումը, ինչ հնարներ են կիրառվում և այլն: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքի քայլաշարը հետևյալն է.



Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ հանգեցինք այն եզրակացության, որ հետաքրքրաշարժ լեզվական խաղերն ու գործնական առաջադրանքները արդյունավետ գործիք են կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացման գործում, եթե դրանք կիրառվում են պարբերաբար և մեթոդապես ճիշտ, եթե կատարված յուրաքանչյուր քայլ նախապես պլանավորված է և բխում է այդ գործընթացում ծագած խնդիրներից:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ավետիսյան Յու., Չաքարյան Յ., Հնչյունաբանություն, ուղղախոսություն, ուղղագրություն, Երևան, 2008, 232 էջ:
2. Բալայան Ա., Ուղղագրության ուսուցումը փոխվարժանքի մեթոդով, «Նախաշավիղ», Երևան, 2007:
3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երևան, 2004, 289 էջ:
4. Գյուլամիրյան Ջ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար, Երևան, 2014, 184 էջ:
5. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, 344 էջ:

### **РЕЗЮМЕ**

### **ВОЗМОЖНОСТИ ПИСЬМА КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ ОРФОГРАФИЧЕСКИХ И ГРАММАТИЧЕСКИХ НАВЫКОВ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ**

В данной статье мы представили способность написания диктантов как эффективное средство развития орфографических и орфоэпических навыков младших школьников. В ходе исследования были разработаны различные приемы, упражнения и интерактивные игры, направленные на развитие вышеуказанных навыков у младших школьников. Результаты исследования показали, что указанные увлекательные и практические подходы значительно повышают уровень орфографических и орфоэпических способностей учащихся.

**Ключевые слова:** начальная школа, орфографические и грамматические способности, упражнения, письменная речь, комплекс заданий.

**«ՄԱՅՐԵՆԻ 3» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ  
ԲԱՌԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

**ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՂԱՎՆԻ**

*Խաչատուր Արսլյանի անվան ՀՊՄՀ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, ՄԿԾ  
I-ին*

*Էլ. հասցե՝ [hayrapetyanaghavni-8@aspu.am](mailto:hayrapetyanaghavni-8@aspu.am)*

**ԱՎԱԳՅԱՆ ԼԱՌԻՐԱ**

*Խաչատուր Արսլյանի անվան ՀՊՄՀ, ք.գ.թ., դրոշմատ*

*Էլ. հասցե՝ [avagyanlaura42@aspu.am](mailto:avagyanlaura42@aspu.am)*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Բարբառները մեր լեզվի հարստությունն են: Դրանք յուրահատուկ շունչ ու պերճություն են հաղորդում լեզվին, խոսքը դարձնում կենդանի ու անմիջական: Հարստացնում են սովորողի բառապաշարը, զարգացնում խոսքը: Այսօր գրական հայերենն ասպարեզից դուրս է մղում բարբառային բառերն ու ձևերը: Բարբառային մի շարք բառեր էլ մտնում են գրական հայերենի շերտերի մեջ և գործածվում իբրև գրական բառեր: Իսկ ի՞նչ ընդգրկվածությունն ունեն բարբառային բառերը տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում, և ի՞նչ աշխատանքներ են իրականացվում դրանց շուրջ: Այս


նպատակով ուսումնասիրել և վերլուծել ենք «Մայրենի 3» այլընտրանքային դասագրքերը:

***Բանալի բառեր՝ բարբառ, բարբառային բառ, տարրական դպրոց, դասագիրք, էլեկտրոնային առաջադրանք:***

Տարրական դասարաններում բարբառային բառերի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերում գետեղված բնագրերի շուրջ աշխատանքի ընթացքում: Տարրական դասարաններում բարբառային բառերի ուսումնասիրումը պետք է իրականացնել գործնականորեն՝ մեթոդական հետևյալ քայլաշարով՝ բարբառային բառի առանձնացում բնագրից, բառի բացատրություն և ակտիվացում, այսինքն՝ բարբառային բառերի գործածում խոսքում: Սովորողների բառապաշարը հարստացնելու, խոսքը զարգացնելու համար անհրաժեշտ է, որ դասագրքերում լինեն նաև բարբառային բառեր պարունակող դասանյութեր: Ուսումնասիրելով «Մայրենի 3» այլընտրանքային դասագրքերը (Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան, «Մայրենի 3», Վ. Սարգսյան, Ե. Ջիլավյան, Բ. Գալստյան, Յ. Խաչատրյան, Ս. Գրիգորյան, Ն. Սարուխանյան, «Մայրենի 3»)՝ բացահայտեցինք, որ դրանցում սահմանափակ են ժողովրդական լեզվամտածողությամբ դասանյութերը:

Ա. Բալայանի, Կ. Չիբուխչյանի հեղինակած «Մայրենի 3» դասագրքից դուրս ենք գրել հետևյալ բարբառային բառերն ու արտահայտությունները՝ **մինուճար, պոկված, մի, գլգլան, մարել, հերիք, շո՛ւտ արեք, ճարել, ճիվ, Էդ, ծուռ, պոկել, բանտել, սրոց, փարախ, օջախ, ծաղկուն, խփել, նախշուն, հալիլոց, դես-դեն, բուն, հիմի, լալկան, սանամեր, խաբար, ճար, ճռալ, մին, Էդպես, Էն, տավար, ճամփա, մորթել, պնդացան, իրիկուն, մեր/մայր/:** Այս բառերն ու արտահայտությունները գործածված են Մարո Մարգարյանի «Հայրենի հող», Սարմենի «Իմ Երևան», Ջաննի Ռոդարիի «Նոր տարի», Երվանդ Պետրոսյանի «Վարդավառ», Նանսեն Միքայելյանի «Դավիթը Մսրրում», Սուրեն Մուրադյանի «Նկարեցի», «Ես հայ եմ», Հովհաննես Թումանյանի «Գետակը», «Թռչունի մտածմունքը», Մկրտիչ Կորյունի «Սոխակը, մեղուն, ագռավը», Աթաբեկ Խնկոյանի «Ճպումն ու մրջյունը», Ռուանդ Շառոյանի «Աշնան կիրակի օր» ստեղծագործություններում: Իսկ այլընտրանքային մյուս՝ «Մայրենի 3» դասագրքում (հեղ.՝ Վ. Սարգսյան և ուրիշներ) տեղ են գտել հետևյալ բարբառային բառերն ու արտահայտությունները՝ **ճարել, թաղ, ֆռֆռալ, թնգթնգալ, կրնկակոխ, բանեցնել/բանացնել, մի, մատնոց, պոկել, խփել, ճիտ, իսկի, ճստիկ, նազիր, պստիկ, Էս, բանջար, ճկել, ճամփա, Էսպես, ձեն, բուն,**

**դատարկուն լինել, գել, բերավ, իրիկուն, քաղքցիք, մին, էն, հրես, ժամ, մեյդան, չեն գալի, քաղքի, դրավ, ջոկել, խալխ, կտուր, պոկել, նվաղել, աշխարիք, հիմի, դես-դեն, կճեպ, կվկվալ, մռլտալ:** Այս բառերն ու արտահայտություններն էլ գործածված են Վաչագան Ա. Սարգսյանի (Վաս) «Յեքիաթային դպրոց», «Ճամփորդություն աշխարհներով», «Գյուղացին ու թզուկը», «Յնարամիտ քույրերի հեքիաթը», «Խաղացանցը», «Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան», «Սառած խոսքեր», Յովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ», «Ամենից լավ տունը», «Թռչունի մտածմունքը», Հանս Բրիստիան Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» ստեղծագործություններում: «Մայրենի 3» այլընտրանքային դասագրքերի համեմատական վերլուծությունն ըստ բարբառային բառերի ընդգրկվածության ներկայացրել ենք տրամագրով.



Տրամագիր 1

**Այսպիսով՝** երկու այլընտրանքային դասագրքերում էլ ոչ միայն բացակայում է բարբառի մասին տեղեկությունը, այլև սահմանափակ են ժողովրդական լեզվամտածողությամբ դասանյութերը, և հետևաբար բարբառային բառերն ու բառաձևերն էլ սակավ են գործածված: Չնայած սովորողները ծանոթանում են մի շարք ժողովրդական ստեղծագործությունների, սակայն դրանցում առկա բարբառային բառերն ու բառաձևերը գրականացված են:

Կարծում ենք՝ բարբառային բառերի ուսուցումը կարևոր է գեղարվեստական արժեքների պահպանման, պատկերավոր խոսքի ձևավորման, մտածողության զարգացման, ինչպես նաև հայ ժողովրդի կյանքում մայրենի լեզվի դերի, նրա զանազան գործառնությունների, պատմական զարգացման փուլերի, գրական և բարբառային տարբերակների վերաբերյալ գիտելիքների հաղորդման համար: Բարբառային բառերի նկատմամբ հետաքրքրությունն առաջացնելու համար առաջարկում ենք օգտագործել փոխներգործուն մեթոդական հնարներ, էլեկտրոնային առաջադրանքներ, խաղեր: Որպես օրինակ՝ ներկայացնենք մեր կողմից կազմված էլեկտրոնային առաջադրանքներ,

վարժություններ և խաղեր, որոնք ուսուցիչները կարող են հարմարեցնել իրենց դասանյութին, դասի նպատակներին ու խնդիրներին:

## 1. «Վերականգնի՛ր»

**բառերը»**



Էլեկտրոնային առաջադրանքում տրված են բարբառային բառեր: Էկրանին բացվում է բարբառային բառը՝ տառերի խառն հաջորդականությամբ: Սովորողը պետք է ընտրի տառերը և դասավորի այնպես, որ ստացվի ճիշտ բառը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրված տառ ուղեկցվում է «ճիշտ»-ն ազդարարող ձայնով, իսկ սխալ ընտրված տառի դեպքում հնչում է «սխալ»-ն ազդարարող ձայն: Առաջադրանքի վերջում սովորողը հնարավորություն ունի տեսնելու իր արդյունքները:

**Էլեկտրոնային առաջադրանքի հղումը՝** <https://wordwall.net/resource/86050151>



## 0. «Այո կամ ոչ»

Էլեկտրոնային առաջադրանքում ներառված են և՛ բարբառային, և՛ գրական հայերեն բառեր: Այդ բառերը հայտնվում են Էկրանին, եթե բացված բառը բարբառային է, ապա սովորողը սեղմում է «այո», իսկ եթե բառը գրական հայերեն է՝ «ոչ»: Սխալ պատասխանի դեպքում բացված պատուհանը կարմրում է և լսվում է սխալն ազդարարող ձայն: **Էլեկտրոնային առաջադրանքի հղումը՝** [https://www.educaplay.com/learning-resources/22634963-learning\\_resource.html](https://www.educaplay.com/learning-resources/22634963-learning_resource.html)

## 0. «Բարբա՞ռ, թե՞ գրական հայերեն»



Բացվում է պատուհան, որտեղ կա երկու սյունակ՝ գրական հայերեն և բարբառային բառեր: Էկրանին բացվող բառերը սովորողը պետք է դասավորի համապատասխան սյունակում:

**Էլեկտրոնային առաջադրանքի հղումը՝** <https://learningapps.org/watch?v=pdz149zhj24>



#### 0. «Լրացրու՛...»

Էլեկտրոնային առաջադրանքին կից տեղադրված է «ճպուռն ու մրջյունը» ստեղծագործության տեսահոլովակը: Այն դիտելուց, վերհիշելուց հետո սովորողը կարողում է ստեղծագործությունը և բաց թողնված բարբառային բառերի փոխարեն ընտրում է համարժեք գրական բառերը:

**Էլեկտրոնային առաջադրանքի հղումը՝** <https://learningapps.org/watch?v=pbm659v3j25>

#### 0. «Համապատասխանեցրու՛»



Տրված են գրական և բարբառային բառեր, որոնք պետք է տեղադրել համապատասխան խմբում: Աշխատանքի վերջում սովորողը կարող է տեսնել՝ որքա՛ն ժամանակում է կատարել աշխատանքը և քանի՛ ճիշտ պատասխան ունի:

**Էլեկտրոնային առաջադրանքի հղումը՝** <https://wordwall.net/resource/73765224>

#### 0. «Ընտրի՛ր ճիշտ տարբերակը»



Բարբառային բառերի վերաբերյալ խաղ, որը սխալվելու հինգ հնարավորություն է տալիս սովորողին: Երբ սովորողը սխալ է պատասխանում վեցերորդ հարցին, խաղը փակվում է, պետք է սկսել նորից: Յուրաքանչյուր հարցին պատասխանելու համար սահմանված է ժամանակ, ժամանակին պատասխանը չնշելու դեպքում կորցնում ես հինգ հնարավորությունից մեկը:

**Էլեկտրոնային**

**խաղի**

**հղումը՝**

[https://www.educaplay.com/learning-resources/22642910-learning\\_resource.html](https://www.educaplay.com/learning-resources/22642910-learning_resource.html)

## 0. «Միացրու՝ համարժեք բառերը»



Էլեկտրոնային առաջադրանքը կատարելիս սովորողն ունի սխալվելու հինգ հնարավորություն, հակառակ դեպքում առաջադրանքը կփակվի, և պետք է սկսել նորից: Սահմանված ժամանակում պետք է ավարտել աշխատանքը:

**Էլեկտրոնային**

**առաջադրանքի**

**հղումը՝**

[https://www.educaplay.com/learning-resources/22641018-learning\\_resource.html](https://www.educaplay.com/learning-resources/22641018-learning_resource.html)

## 0. «Ընտրի՛ր համապատասխան բառերը»



Բացվում է պատուհան՝ «Գրական հայերեն բառեր» կամ «Բարբառային բառեր» խորագրով: Կախված խորագրից՝ պետք է ընտրել համապատասխան բառերը:

**Էլեկտրոնային**

**առաջադրանքի**

**հղումը՝**

[https://www.educaplay.com/learning-resources/22656943-learning\\_resource.html](https://www.educaplay.com/learning-resources/22656943-learning_resource.html)

## 0. «Ճիշտ կամ սխալ»



Էլեկտրոնային առաջադրանքը ներառում է մի շարք պնդումներ: Այդ պնդումները ճշմարիտ են կամ սխալ: Սովորողը պետք է կարդա պնդումը, որոշի՝ ճիշտ է, թե՞ ոչ, և նշի համապատասխան տարբերակը:

**Էլեկտրոնային**

**առաջադրանքի**

**հղումը՝**

<https://create.kahoot.it/details/138b176d-ab31-4966-9791-7c21b2b98fc6>

Այսպիսով՝ բարբառների ուսուցումը կարևոր է ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից, մայրենիի դասագրքերում առկա բարբառային բառերը խթանում են սովորողների ընթերցողական հետաքրքրությունները, զարգացնում են խոսքը: Այսօր բարբառային բառերի

ուսումնասիրման լավագույն միջոցներից են էլեկտրոնային առաջադրանքներն ու խաղերը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Յ., Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր Ա, «Գիտություն» հրատ., Եր., 2001, 2792 էջ:
2. Բալայան Ա., Չիբուխչյան Կ., Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Մաս 2, Եր., «Ձանգակ» հրատ., 2024, 116 էջ:
3. Բալայան Ա., Չիբուխչյան Կ., Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Մաս 1, Եր., «Ձանգակ» հրատ., 2024, 104 էջ:
4. Գյուլամիրյան Զ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., «Ձանգակ» հրատ., 2018, 344 էջ:
5. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Մաս 1, Եր., Հեղ. հրատ., 2024, 92 էջ:
6. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Մաս 2, Եր., Հեղ. հրատ., 2024, 112 էջ:
7. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա (տարրական դասարաններ), ուս. ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Եր., Լույս, 1980, 564 էջ:

### SUMMARY

#### COMPARATIVE ANALYSIS OF DIALECT WORDS AND THE DEVELOPMENT OF DIGITAL RESOURCES IN ALTERNATIVE “MOTHER TONGUE 3” TEXTBOOKS

Hayrapetyan Aghavni, Avagyan Laura

Dialects are the richness of our language. They give a significant boost and splendor to the language and make speech lively and natural. They enrich the learner's vocabulary and develop their speech. Nowadays literary Armenian is pushing dialect words and forms out of the literary language. Yet a number of dialect words and forms enter the layers of literary Armenian and are used as literary words. So, what is the inclusion of dialect words in elementary school textbooks of the mother tongue and what is done with regard to this issue? For this purpose we have studied and analyzed the alternative textbooks of "Mother Tongue 3".

**Key words:** *dialect, dialect word, elementary school, textbook, elementary assignment.*

**ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻ  
ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈԼԼՈՒՄ (3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)**

**ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՅՊՄՅ, ՍԿՖ, ԲԿԾԱ 4-րդ կուրս*

*Էլ. հասցե՝ [karine.ghazaryan.2004@mail.ru](mailto:karine.ghazaryan.2004@mail.ru)*

**ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԻՐԱՐՓԻ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՅՊՄՅ, մ.գ.թ., դոցենտ*

*Էլ. հասցե՝ [Sirarpi81@mail.ru](mailto:Sirarpi81@mail.ru)*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Ներկայիս կրթական համակարգում, որտեղ շեշտը դրվում է աշակերտակենտրոն ուսուցման, քննադատական մտածողության և հաղորդակցական կարողությունների ձևավորման վրա, չափազանց կարևոր է դասի իմաստավորման փուլի մեթոդական կազմակերպումը:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում բացահայտել ենք մայրենիի դասի իմաստավորման փուլում բնագրի շուրջ աշխատանքի բաղադրիչների ճիշտ կիրառումը՝ համադրելով տեսական գիտելիքները իրական դասի վերլուծության հետ:

***Բանալի բառեր՝*** իմաստավորման փուլ, բնագրի շուրջ աշխատանքի, բաղադրամաս, գաղափար, ենթատեքստ:

Մեր ուսումնասիրության ընթացքում անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին.

- ուսումնասիրել բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրիչները՝ ըստ մասնագիտական գրականության:
- Պարզել, թե ինչպե՛ս են բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրիչներն (գրույց, կարդալ, բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, պատմում, ամփոփում) իրականացվում տարբեր ժանրի ստեղծագործությունների ուսումնասիրման ընթացքում:
- Համեմատել բանաստեղծության («Գետակը») և պատմվածքի («Աշնան կիրակի օր») ուսումնասիրման գործընթացում բաղադրամասերի բացատրական ընթերցանության մեթոդի արդյունավետությունը:

- Վերլուծել, թե ինչպե՞ս են նշված բաղադրամասերը նպաստում սովորողների ճանաչողական, հուզական և ստեղծագործական ներգրավվածությանը:

Նշված խնդիրները լուծվում են այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են համեմատական վերլուծությունը, ըստ բաղադրիչների որակական գնահատումը, տրամագրի միջոցով տեսանելի համադրությունը և այլն:

Հայտնի է, որ տարրական դպրոցում մայրենիի դասերն իրականացվում են բացատրական ընթերցանության մեթոդով: «Բացատրական ընթերցանության մեթոդը մանկավարժահոգեբանական, լեզվաբանական և գրականագիտական տեսանկյուններով հիմնավորված համակարգ է, որի հիմքում ընկած է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը: Հանգամանք, որն անկասկած ենթադրում է արդյունավետությունն այդ բառի լայն իմաստով» [4, էջ 51]:

Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ գրույց, բնագրի ընթերցում, բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, պատմում ամփոփում [2, էջ 103]:

Մեր հետազոտությունը իրականացրել ենք Երևանի «Վարդանանք» կրթահամալիրի 3- րդ դասարանում: Հետազոտության նպատակն էր պարզել մայրենիի դասի իմաստավորման փուլում բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրիչների (գրույց, բնագրի ընթերցում, բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, պատմում) դերը տարբեր ստեղծագործությունների ուսումնասիրման ժամանակ և դրանց ազդեցությունը սովորողների ներգրավվածության, հուզական ապրումների և ստեղծագործականության դրսևորման վրա:

Հետազոտության ընթացքում վարել ենք ԽԻԿ (խթանում-իմաստավորում-կշռադատում) համակարգով դասեր՝ ուսումնասիրելով «Գետակը» և «Աշնան կիրակի օր» ստեղծագործությունները [1, էջ 71-85]: Թեև կառուցվածքային առումով նշված դասերն ունեցել են նմանություն, նրանց բովանդակային և մեթոդական իրադրությունը տարբեր հարթություններում է բացահայտել բաղադրիչների հնարավորությունները:

Դասը վարելուց հետո կատարել ենք դասագործընթացում կիրառված բաղադրամասերի համեմատական վերլուծություն, որը հնարավորություն տվեց հասկանալու ոչ միայն ուսուցման մեթոդների արդյունավետությունը, այլև այն, թե ինչպես է գրական ստեղծագործությունը դառնում սովորողների ներաշխարհի բացման, արժեքային կողմնորոշման և ազատ արտահայտման միջոց:

**2րդ կյց:** Երկու դասերի ընթացքում էլ գրույցը ծառայեց որպես իմաստավորման

շարժիչ ուժ: Սակայն «Աշնան կիրակի օր» պատմվածքի ուսումնասիրման ընթացքում զրույցը առավել հուզական և փորձառական էր, քանի որ սովորողները կարողացան նմանվել Գևորգին, կիսվել սեփական ապրումներով և գնահատականներով: Մինչդեռ «Գետակը» բանաստեղծության ուսումնասիրության ժամանակ զրույցն ավելի շատ ճանաչողական բնույթ ուներ՝ ուղղված կերպարի վարքի և պարտականությունների բացահայտմանը:


**Բնագրի ընթերցում:** Վերոնշյալ ստեղծագործությունների ուսումնասիրման ընթացքում կիրառեցինք կարդալու տարբեր տեսակներ՝ շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի և դերերով: Սակայն, «Գետակը» բանաստեղծությունը ընթերցման առումով պահանջում էր արտահայտչականություն և հնչերանգ, մինչդեռ պատմվածքի ընթերցումն ուղղված էր բովանդակության վերլուծական ընկալմանն ու ավելի խոր շերտերով պատկերացմանը:

**Բառային աշխատանք:** Երկու դասերի ընթացքում էլ իրականացրած բառային աշխատանքը նպաստեց սովորողների ակտիվ բառապաշարի հարստացմանը: «Աշնան կիրակի օր» թեմայի ուսումնասիրման ընթացքում շեշտը դրվեց բառերի հույզային և իմաստային ընկալման վրա, ինչը նպաստեց սովորողների արժեքային համակարգի զարգացմանը: «Գետակը» բանաստեղծությունը ուսումնասիրելիս կատարեցինք բառաբարդում, ածանցում, ինչը նպաստեց բառի իմաստը հասկանալուն և ուղղագրական գիտելիքների ամրակայմանը:

**Աշխատանք բնագրի շուրջ:** Բաղադրասմասերի կիրառման ընթացքում բնագիրը բաժանեցինք մասերի, վերնագրեցինք, այնուհետև առանձնացրինք հենակետային բառերը: Սակայն «Աշնան կիրակի օր» թեմայի ուսումնասիրման ժամանակ սովորողներն ավելի ազատ մեկնաբանեցին հերոսների վարքն ու շարժառիթները, բանավիճեցին և վերապրեցին պատմությունը: Այս դասի ընթացքում բնագրի շուրջ աշխատանքը վերածվեց հոգեբանական և բարոյական քննարկման, մինչդեռ «Գետակը» բանաստեղծության ուսումնասիրման ընթացքում մնաց առավել փաստային և նկարագրական շրջանակներում:

**Պատմում:** Պատմելու ժամանակ սովորողների ստեղծագործական մոտեցումն ակնհայտ էր: Նրանք վերապատմեցին ոչ միայն ըստ բնագրի, այլև առաջարկեցին այլընտրանքային ավարտներ, վերակառուցեցին դիպաշարը: «Գետակը» բանաստեղծության բովանդակության վերարտադրումը սահմանափակվեց դիպաշարի ներկայացմամբ, քանի որ բանաստեղծական լեզուն սովորողներից պահանջում էր հիշողության և ձևական կառուցվածքի պահպանում:

Ուսումնասիրելով մեր վարած մայրենիի դասերի ընթացքում կիրառած բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերի (զրույց, բնագրի ընթերցում, բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, պատմում) դերն ու կարևորությունը՝



արդյունքները վերլուծեցինք և ներկայացրինք դրանք տրամագրի տեսքով:

Ամփոփելով մեր վարած դասերի արդյունքները՝ նշենք, որ «Աշնան կիրակի օր» պատմվածքի ուսումնասիրման ժամանակ սովորողները դիպաշարն ընկալեցին ավելի խորը, դրսևորեցին զգացմունքային ներգրավվածություն և ինքնուրույն դատողություններ անելու կարողություն, իսկ «Գետակը» ստեղծագործության ուսումնասիրման ընթացքում սովորողներն ավելի ակտիվ էին և բառային աշխատանքի ընթացքում առավել արտահայտիչ էին ընթերցում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալայան Ա., Զիբուխչյան Կ., Մայրենի 3, Չանգակ, Երևան, 2024:
2. Գյուլամիրյան Զ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Չանգակ, Երևան, 2018:
3. Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Փուլային ուսուցման եղանակ, Չանգակ-97, Երևան, 2014, 159 էջ:
4. Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրոստեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Երևան, 2016:

## РЕЗЮМЕ

### СТРУКТУРНЫЕ ЭЛЕМЕНТЫ РАБОТЫ НАД ТЕКСТОМ В ФОРМИРОВАНИИ НАВЫКОВ РОДНОГО ЯЗЫКА (3-Й КЛАСС)

Казарян Карине, Хачатрян Сирарпи

Исследование показало, что компоненты этапа осмысления на уроках объяснительного чтения (беседа, чтение текста, работа со словарём, работа с текстом и пересказ) играют важную роль в когнитивном, эмоциональном и творческом развитии учащихся. В случае с рассказом особенно ярко проявилось эмоциональное вовлечение и самостоятельность суждений, а при изучении стихотворения - выразительное чтение и работа с лексикой. Эти компоненты способствуют эффективной организации обучения.

*Ключевые слова:* этап осмысления, работа с текстом, компонент, идея, подтекст.

**«ՄԱՅՐԵՆԻ 4 ԴԱՍԱԳՐՔԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈԹ ԵՎ ԲՅՈՒՐ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ»  
ՎԵՐՆԱԳՐՈՎ ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԲՆԱԳՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ  
ԸՍԲՈՒՄԱՆ և ԵՆԹԱՏԵՔՍԻ ԿՈԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ»**

#### ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵ

Առինջի Կ.Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ

Էլ. հասցե՝ [nare.hovhannisyan1990@mail.ru](mailto:nare.hovhannisyan1990@mail.ru)

#### ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՅ, ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր

Էլ. հասցե՝ [gyulamiryanjulieta42@aspu.am](mailto:gyulamiryanjulieta42@aspu.am)

#### ԱՄՓՈՓՈՒՄ


Բացահայտելու համար, թե ՀՀ տարրական դասարաններում այսօր գործածության մեջ գտնվող մայրենիի դասագրքերը որքանով կարող են նպաստել կարդացած ստեղծագործությունների գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման կրտսեր

դպրոցականի կարողությունների զարգացմանը՝ մենք ուսումնասիրեցինք ՀՀ «Մայրենի 4» դասագրքի «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» վերնագրով թեմատիկ խմբի ստեղծագործությունները: Դիտարկելով ստեղծագործությունների գաղափարի բացահայտման և ենթատեքստի կռահման գործընթացում արդյունավետ մեթոդները և դրանց ճիշտ կիրառումը: Ներկայացրել ենք կարդացած ստեղծագործության շուրջ աշխատանքի ընթացքում փոխներգործուն մեթոդների կիրառման ճանապարհով գաղափարի և ենթատեքստի բացահայտման կրտսեր դպրոցականների կարողության զարգացմանը նպաստող մեթոդական ցուցումներ: Մշակել ենք «Մայրենի 4» դասագրքի «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» վերնագրով թեմատիկ խմբում զետեղված ստեղծագործությունների բնագրի գաղափարի և ենթատեքստի կռահման մեթոդական հնարներ:

***Քանալի բառեր՝ ենթատեքստ, բնագիր, գաղափար, կրտսեր դպրոցական, մայրենի:***

Մեր վարած մայրենիի դասերի և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում վերլուծել և դիտարկել ենք այն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնք նպաստում են կարդացած ստեղծագործության գաղափարի ըմբռնմանը և ենթատեքստի կռահմանը: Թեև քննարկվող դասագիրքը 2025-26 ուսումնական տարվանից գործածության մեջ չէ, սակայն քանի որ մենք մեր ուսումնասիրությունները իրականացրել ենք 2024-25 ուսումնական տարում, և նրա ընթացքը և արդյունքները կարող են պիտանի լինել նաև նոր ՀԴԳ-ի հիման վրա գրված դասագրքերով աշխատելիս, մենք նպատակահարմար ենք գտել ընթերցողին ներկայացնել մեր ուսումնասիրությունների արդյունքները:

Դիտարկելով IV դասարանում մայրենիի դասի ընթացքում «Գրքի զրույցը քեզ ծանոթ և անծանոթ հրաշալիքների մասին» ստեղծագործության ուսումնասիրման գործընթացի արդյունքները՝ նշենք, որ այս ստեղծագործության բովանդակության լիարժեք ընկալման համար առաջին հերթին աշակերտներն ուշադրությամբ պետք է ընթերցեն բնագրի յուրաքանչյուր տողը, արտահայտությունը, որպեսզի կարողանան դիպաշարն ըմբռնել ամբողջությամբ, ընկալեն հեղինակի ասելիքը, մտադրությունները և այլն: Դասն սկսվեց «Մտազրոհի» մեթոդով՝ առաջարկելով բնագրի վերնագիրն ընթերցելուց հետո մտածել, թե ինչի մասին կարող է լինել այս ստեղծագործությունը: Ի՞նչ է նրանց մտքով առաջինը անցնում **հրաշք** բառն արտասանելիս և առհասարակ, ի՞նչն ենք նրանք **հրաշք** համարվում: Սովորողներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր միտքը: Դրանք հետևյալն էին.



Այնուհետև ուսուցչի հանձնարարությամբ սովորողները ստեղծագործությունը կարդացին՝ շարունակելով: Ապա իրականացվեց կանգառներով ընթերցանություն, որի ընթացքում նրանք հատված-հատված վերլուծեցին իրենց ընթերցածը՝ մանրագնին դիտարկելով յուրաքանչյուր միտք, դրվագ, երկխոսություն:

Բնագրի բովանդակությունն ամբողջությամբ ընկալելուց հետո սովորողներն իրականացրին ընտրովի ընթերցանություն: Յուրաքանչյուր ընթերցող ուսուցչի հանձնարարած որևէ հատված կարդաց և մեկնաբանեց տարբեր տեսանկյուններից: Երբ սովորողները ներկայացնում էին իրենց առանձնացրած հատվածները, ուսուցչի հարցերի միջոցով յուրաքանչյուր խումբ ակտիվ երկխոսության միջոցով փորձում էր խոսել բնագրի ենթատեքստի և գաղափարի մասին:

Բնագրի ենթատեքստը բացահայտելու համար ուսուցիչը տվեց նախապես մշակված մի քանի հարց.

- Ի՞նչ հրաշքների հանդիպեցիք այս ստեղծագործությունն ընթերցելիս:
- Ինչո՞ւ է ստեղծագործության հեղինակը թվարկվածները համարում հրաշքներ:
- Կարդացե՞ք բնագրի այն հատվածները, որոնք վերաբերում են ստեղծագործության գաղափարին:
- Ի՞նչ եք կարծում, կա՞ մի բան, որ դուք հասկացաք, բայց տողերում հստակ ներկայացված չէր:

Սովորողները նշեցին ստեղծագործության մեջ իրենց հանդիպած հրաշքների անունները՝ **մարդ, հայոց սուրբ այբուբեն, գիտելիք, գիր, գիրք**: Այնուհետև նրանք բացատրեցին, թե ինչու են դրանք հրաշք համարում: Նշենք, որ բոլորը հնչեցնում էին նույն պատասխանները՝ մի փոքր ձևափոխված տարբերակներով, սակայն հիմնական միտքն այն էր, որ նշվածների լինելիությամբ է պայմանավորված մեր՝ հայերիս դարավոր ինքնությունը, որի համար պետք է երախտապարտ լինենք

Մեսրո Մաշտոցին՝ հայ գրերի ստեղծման և մեր ժողովրդին՝ հայոց տառերը պահպանելու համար: Այնուհետև ուսուցչի խնդրանքով սովորողները ներկայացրին այն տողերը, որտեղ ամբողջանում էր իրենց ասելիքի հիմնական գաղափարը. «Յրա՞ջք չէ, որ դու հիմա կարդում ես ինձ, հասկանում ես ինձ, որ մենք գրուցում ենք միմյանց հետ: Դա նրանից է, որ քո մեջ արդեն ապրում է հրաշալիքներից մեկը՝ **հայող սուրբ այբուբենը**, և դու էլ նրա՛ մեջ ես ապրում, նա քո տունն է և քո ինքնությունը»: Անդրադառնալով վերջին հարցին՝ սովորողները նշեցին, որ ստեղծագործության տողերից լսելի է իրենց նախնիների ձայնը, որը ևս մեկ անգամ նրանց փորձում է հասցնել իրենց իսկ պատմության, մեսրոպաշունչ գրերի, հայի ինքնության պահպանման կարևորությունը, հանուն գալիք լուսավոր ապագայի, գիտելիքահեն կրթության կարևորության գիտակցման և կատարված սխրանքների վերաբերյալ նոր սերունդներին ժառանգություն թողնելու առաջնայնությունը: Դատողութ-յունների միջոցով՝ սովորողները քննարկեցին հնչեցրած հարցերին իրենց տված պատասխանները՝ ամբողջությամբ բացահայտելով հեղինակի կողմից չգրված, բայց իրենց համար արդեն իսկ բացահայտված ասելիքը: Լուծելով բնագրի բաղադրամասերի բոլոր խնդիրները՝ վերջում սովորողների տպավորություններն ամբողջացնելու, ստեղծագործության գաղափարը բացահայտելու նպատակով ուսուցիչը գրատախտակի մյուս կողմում գծեց «Քառաբաժան» մեթոդի պատկերը, որի յուրաքանչյուր հատված ըստ պահանջի՝ պետք է սովորողները լրացնեին: «Քառաբաժան» մեթոդի կիրառման ընթացքում սովորողները ներկայացրին հետաքրքիր մտքեր. նրանք ընկալել էին բնագրի գաղափարը, հեղինակի կողմից նրանց հղած ասելիքի: Որպես ամփոփում՝ սովորողները քննարկեցին ստեղծագործական մեթոդիկան կառույցում տրված հարցերը: Ապա ուսուցչի հանձնարարությամբ սովորողներն աշխատեցին զույգերով: Այնուհետև ուսուցիչը հանձնարարեց ուշադիր դիտել գրատախտակի այն հատվածը, որտեղ նա գրառել էր վերնագրի հետ կապված սովորողների հնչեցրած մտքերը և նշել, թե դրանցից, ո՛րն է առավել մոտ տվյալ բնագրի գաղափարին: «Քառաբաժան» մեթոդի կիրառման ընթացքում սովորողները ներկայացրին հետաքրքիր մտքեր. նրանք ընկալել էին բնագրի գաղափարը, հեղինակի կողմից նրանց հղած ասելիքի: Որպես ամփոփում՝ սովորողները քննարկեցին ստեղծագործական մեթոդիկան կառույցում տրված հարցերը: Ապա ուսուցչի հանձնարարությամբ սովորողներն աշխատեցին զույգերով: Այնուհետև ուսուցիչը հանձնարարեց ուշադիր դիտել գրատախտակի այն հատվածը, որտեղ նա գրառել էր վերնագրի հետ կապված սովորողների հնչեցրած մտքերը և նշել, թե դրանցից, ո՛րն է առավել մոտ տվյալ բնագրի գաղափարին: Քննարկումից հետո

սովորողները գրատախտակին թողեցին այն երկու միտքը, որոնք առավել մոտ էին կարդացած ստեղծագործության բովանդակությանը:

| <b>Ի՞նչ լսեցիր:</b>                                                                                                                                                                                                                                                    | <b>Ի՞նչ տեսար:</b>                                                                                                                                                                                                   |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. Մեն . Մեսրոպ Մաշտոցի ծայնը,<br>2. «Եր . Երևան դարձած իմ Էրեբունի»<br>երգը,<br>3. տաճ . տաճարի դողանջների զրնգոցը,<br>4. խաչ . խաչքարի փորագրման<br>ընթացքի ծայնը,<br>5. շար . Շարական,<br>6. Կոմի Կոմիտասի ծայնը,<br>7. գրքի . Պատմության էջերի թերթերի<br>ծայնը... | 1. հայր . Յայրենիքս,<br>2. Մե . Մեսրոպ Մաշտոցին և Կորյունին,<br>3. մեր լ . մեր լեռները,<br>4. հայո . հայոց գրերը,<br>5. պատ . պատմական երկիրս,<br>6. վանք . մեր հերոսներին,<br>7. քանդ . անցիալից դրվագներ...        |
| <b>Ի՞նչ զգացի՞ր:</b>                                                                                                                                                                                                                                                   | <b>Ի՞նչ Ի՞նչ նոր վերնագիր<br/>կառաջարկես:</b>                                                                                                                                                                        |
| 1. հպա . Հպարտություն<br>2. սեր . սեր հայրենիքի նկատմամբ<br>3. ապ . ապահովություն<br>4. զար . զարմանք ու կարոտ<br>6. պայք . հաղթանակած ապրելու<br>ցանկություն<br>7. սպա . պայքարելու ցանկություն                                                                       | 1. «Հայ . «Հայի ինքնությունը»<br>2. «Նա . «Նախնիներիս կանչը»<br>3. «Մե . «Մեսրոպյան գրեր»<br>4. «Հայ . «Հայոց գանձարան»<br>5. «Հայ . «Հայացք դեպի անցյալ»<br>6. «Գրե . «Նախնիների կանչը»<br>7. «Ան . «Անցյալի ծայնը» |

«Քառաբաժան» մեթոդի կիրառման ընթացքում սովորողները ներկայացրին հետաքրքիր մտքեր. նրանք ընկալել էին բնագրի գաղափարը, հեղինակի կողմից նրանց հղած ասելիքի: Որպես ամփոփում՝ սովորողները քննարկեցին ստեղծագործության մեթոդիկան կառույցում տրված հարցերը: Ապա ուսուցչի հանձնարարությամբ նրանք աշխատեցին զույգերով: Այնուհետև ուսուցիչը հանձնարարեց ուշադիր դիտել գրատախտակի այն հատվածը, որտեղ նա գրառել էր ստեղծագործության վերնագրի հետ կապված սովորողների հնչեցրած մտքերը և նշել, թե դրանցից, ո՞րն է առավել մոտ

տվյալ բնագրի գաղափարին: Քննարկումից հետո սովորողները գրատախտակին թողեցին այն երկու միտքը, որոնք առավել մոտ էին կարդացած ստեղծագործության բովանդակությանը:

Այսպիսով՝ կարդացած ստեղծագործության գաղափարը բացահայտելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների մտածողության տեսակները, ստեղծել սեփական կարծիքն ազատ արտահայտելու պայմաններ, բավարարել նրանց հուզող հարցերը և պահանջները: Ուսումնասիրելով «Մայրենի IV» դասագրքի քննարկվող թեմատիկ խմբի մեթոդական կառույցում տրված որոշ առաջադրանքներ՝ բացահայտեցինք, որ դրանք այդքան էլ արդյունավետ չեն ստեղծագործության գաղափարի և ենթատեքստի բացահայտման իմաստով, չեն բխում կարդացած բնագրի գաղափարի կարևորությունից, այսպես ասած՝ չափելի չեն դարձնում ստեղծագործության կարևորությունը սովորողների համար: Մենք մշակեցինք և մայրենիի դասերի ընթացքում կիրառեցինք մի քանի առաջադրանք, որոնք մեծապես նպաստեցին քննարկվող խնդրի լուծմանը.

- 1. Ներկայացրե՛ք ձեր կարծիքը ստեղծագործության հիմնական մտքի կարևորության վերաբերյալ:***
- 2. Ասացե՛ք հայոց տառերի թվային արժեքը:***
- 3. Գրե՛ք ակրոստիքոս «Գիրք» և «Հրաշք» բառերով:***
- 4. Հավելյալ տեղեկույթի միջոցով սահիկնե՛ր պատրաստեք հայոց այբուբենի մասին:***
- 5. Ըստ ձեզ՝ ո՞րն է հայոց այբուբենի կարևորությունը մեր կյանքում:***
- 6. Կարևո՞ր է արդյոք այբուբենի լինելիությունը ազգային ինքնության պահպանման գործում:***

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, «Ձանգակ» հրատարակչություն, Եր., 2018, 340 էջ:
- Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, «Ձանգակ» հրատարակչություն, Եր., 2011, 97 էջ:
- Գյուլամիրյան Ջ., «Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման հետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկան», «Նախաշավիղ» 2001, N3:

4. Գյուլամիրյան Ջ. Յ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Եր., Լույս, 1998, 130 էջ:
5. Սարգսյան Վ., Խաչատրյան Յ. և այլք, Մայրենի 4, մաս 1, հանրակրթական դպրոցի դասագիրք, Եր., Մանմար, 2022, 89 էջ:
6. Սարգսյան Վ., Խաչատրյան Յ. և այլք, Մայրենի 4, (մեթոդական ձեռնարկ), Եր., Մանմար, 2022, 194 էջ:

## **РЕЗЮМЕ**

### **«ИЗУЧЕНИЕ ТЕМАТИЧЕСКОЙ ГРУППЫ ПО ЗАГЛАВИЮ « СЕМЬ И МНОГО ЧУДЕС АРМЕНИИ» В УЧЕБНИКЕ РОДНОГО ЯЗЫКА ДЛЯ 4 КЛАССА С ТОЧКИ ЗРЕНИЯ МЕТОДИКИ ФОРМИРОВАНИЯ ИДЕИ ТЕКСТА И УПРАВЛЕНИЯ ПОДТЕКСТОМ»**

**Оганнисян Наре, Гюламирян Джулиета**

В этой статье представлена информация об эффективном обучении в современных школах.-ряд эффективных методов и методик, которые позволяют ученикам младших классов определить смысл и угодать контекст текста простыми способами. В статье подробно изложен весь процесс работы, проведённой вокруг исходного текста, подходы, все внутренние и внешние факторы, методы и методические приёмы, которые также способствуют искажению ценностей учащихся.

***Ключевые слова:** подтекст, текст, идея, младший школьник, родной язык.*

### **ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

#### **ՓԱՅՏՅԱՆ ԼԱՈՒՐԱ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՍԿ ֆակուլտետ, բակալավր, 4-րդ կուրս,  
Էլ. հասցե՝ [paytyanlaura-8@aspu.am](mailto:paytyanlaura-8@aspu.am)*

#### **ՄԻՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԳՈՒՇ**

*ՀՊՄՀ, մ. գ. թ., դոցենտ*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Տարրական դպրոցի մայրենիի դասավանդման հիմնական նպատակներից է կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացումը: Մեր հոդվածի հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է մայրենիի դասերին թելադրությունների կիրառման ճանապարհով կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացմամբ և առկա դժվարությունները վեր հանելու անհրաժեշտությամբ:

***Բանալի բառեր՝ տարրական դպրոց, թելադրություններ, ուղղագրական և ուղղախոսական կարողություններ:***

Մեր ուսումնասիրության թեման առնչվում է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝

1. Ուսումնասիրել թեմայի հիմնախնդրի վերաբերյալ առկա ուսումնամեթոդական գրականություն:
2. Բացահայտել՝ ինչպես են թելադրությունների տեսակները ազդում սովորողների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացմանը:
3. Պարզել, թե ինչ աշխատանքներ են իրականացնում ուսուցիչները սովորողների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացման համար:
4. Վերլուծել փորձնական աշխատանքի արդյունքները:

**Խնդիրներին տրվել է լուծում այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են** հետազոտության թեմային վերաբերող մեթոդամանկավարժական գրականության ուսումնասիրումը, ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզը, նրա արդյունքների վերլուծումը, թելադրությունների անցկացումը և արդյունքների վերլուծությունը: 4-րդ դասարանում անցկացրել ենք թելադրություններ, իսկ դասվարների շրջանում՝ հարցախույզ, և ամփոփել ենք արդյունքները:

Ուսումնասիրությունները կատարվել են «Գլոբալ Բրիջ» կրթահամալիրում:

Ուսումնասիրություններին մասնակցել են 11 ուսուցիչ և 11 աշակերտ: Ուղղագրությունը լեզվի համար հանրության կողմից ընդունված, պաշտոնական ճանաչում գտած գրության կանոնների համակարգն է: Ուղղախոսությունը ճիշտ խոսելու, ճիշտ կարդալու կանոնների ամբողջությունն է [3, էջ 27]:

Ուղղախոսական կարողությունների զարգացման տեսանկյունից կարևոր է ունկնդրելու կարողությունը: Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն

ճիշտ, տեղին, հետաքրքիր, դիպուկ խոսել, այլ նաև լսել, ունկնդրել, ընկալել այն, ինչ ասում է գրուցակիցը [1, էջ 42]:

Կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացման միջոցներից մեկը թելադրությունն է: Թելադրության միջոցով աշակերտները գիտակցում են հայերենի գրության ու արտասանության միջև եղած տարբերությունները, վարժվում են սովորած ուղղագրական, ուղղախոսական, քերականական ու կետադրական գիտելիքների գործադրման մեջ, հարստանում է նրանց բառապաշարը, սովորում են խոսք կառուցել:


Մեթոդական արդի գրականության մեջ, ըստ անցկացման բովանդակության, ընդունվեցին երկու խմբի թելադրություններ՝ սովորական և ստեղծագործական, իսկ ըստ անցկացման նպատակի՝ բացատրական և ստուգողական: Բացի ստուգողական թելադրություններից մնացած բոլոր թելադրություններն ուղղագրական կարողությունների ձևավորմանը միտված վարժություններ են, այսինքն՝ ունեն ուսուցանելու, վարժեցնելու, հմտացնելու նպատակ [2, էջ 309]:

Պարզելու համար, թե ինչ փորձառություն ունեն ուսուցիչները թելադրությունների կազմակերպման և կիրառման գործընթացում, իրականացրինք հարցախույզ:

Հարցախույզին մասնակացել է 11 ուսուցիչ: Հարցախույզի հարցերին ուսուցիչների տված պատասխանների հիման վրա իրականացրել ենք վիճակագրական վերլուծություն:


1. Առաջին հարցով մենք պարզել ենք, **թե թելադրության որ տեսակներն են ավելի շատ կիրառում տարրական դպրոցի ուսուցիչները:**

Ուսուցիչների 20.5%-ը նախապատվությունը տվել է նախազգուշական և ընտրովի թելադրություններին, 18.2%-ը՝ ինքնաթելադրություններին և հորինողական թելադրություններին, 15.9%-ը՝ ազատ թելադրություններին, 6.8%-ը՝ առարկայական թելադրություններին: Այս տվյալները փաստում են, որ ուսուցիչները հիմնականում նախընտրում են այն թելադրության տեսակները, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս նախապատ ընտրության ազատություն ունենալու, մինչդեռ ստեղծագործական թելադրությունները կիրառվում են հարաբերականորեն պակաս:



2. Երկրորդ հարցով պարզել ենք, թե **ուսուցիչների կարծիքով թելադրության որ տեսակն է լավագույնս նպաստում աշակերտների ուղղագրական կարողությունների ձևավոր մանր:**


Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 37%-ը նշել է նախազգուշական թելադրությունը, 27%-ը՝ ինքնաթելադրությունը, 27% ընտրովի թելադրությունը, 9%-ը՝ ազատ թելադրությունը, իսկ հորինողական թելադրությունը ոչ մի ուսուցիչ չի նշել: Ուսուցիչների պատասխաններից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ըստ ուսուցիչների՝ օգտակար են սովորական թելադրությունները:



3. Երրորդ հարցով պարզել ենք, **թե ինչ բնույթի սխալներ են առավել հաճախ թույլ տալիս սովորողները թելադրություն գրելիս:**


Ուսուցիչների 31%-ը նշել է ուղղագրական արժեք ներկայացնող բառերում թույլ տրվող տառասխալները, 27%-ը՝ տառերի բացթողումը, 23%-ը՝ կետադրական նշանների սխալ տեղադրությունը, 19%-ը՝ կետադրական նշանների բացակայությունը, իսկ տառերի հաջորդականության խախտումը ոչ մի ուսուցիչ չի նշել:

Պատասխաններից ելնելով՝ կարող ենք ասել, որ սովորողները հաճախ դժվարանում են ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ճիշտ գրության և կետադրական նշանների ճիշտ տեղադրության ժամանակ:




4. Չորրորդ հարցով պարզել ենք **այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են աշակերտների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացմանը:**

Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 46%-ը նշել է կենտրոնացման դժվարությունները, 27%-ը՝ ուշադրության բացակայությունը, 27%-ը նշել է և՛ ուշադրության բացակայությունը, և՛ կենտրոնացման դժվարությունները: Այս արդյունքները վկայում են, որ աշակերտները հաճախ են ունենում կենտրոնացման դժվարություններ, ինչը պահանջում է դասավանդման մեթոդների առավել նպատակային ընտրություն՝ ուղղված աշակերտների ուշադրության և կենտրոնացման կարողությունների բարելավմանը:



5. Հինգերորդ հարցով պարզել ենք, **թե ինչ աշխատանք են կատարում տարրական դպրոցի ուսուցիչները թելադրությունից հետո՝ սովորողների ուղղագրական և ուղղախոսական սխալների ուղղման համար:**

Ուսուցիչների 33%-ը պատասխանել է՝ սխալների քննարկում խմբային կամ զույգերով աշխատանքով, 27%-ը՝ թույլ տված սխալների ուղղում, բացատրում, 23%-ը՝ լրացուցիչ վարժությունների հանձնարարում, 17%-ը՝ ուղղագրական կանոնների կրկնություն:



Ըստ արդյունքների՝ ուսուցիչների մեծամասնությունը նախընտրում է կիրառել նախազգուշական, ընտրովի և ինքնաթելադրություններ, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին նախապես պատրաստվելու և դրսևորելու որոշ ինքնուրույնություն:

Ստեղծագործական թելադրությունների (հորինողական, ազատ, առարկայական) կիրառման հաճախականությունը ավելի ցածր է:

Աշակերտների ուղղագրական կարողությունների զարգացման նպատակով իրակա նացրած դասերից ներկայացնենք մեկը (4-րդ դասարան):

Թեման էր՝ օ (ո) ձայնավորի ուղղագրությունը:

Մեր նպատակն էր՝

- Վերհիշել և ամրապնդել օ (ո) ձայնավորի ուղղագրությունը և ճիշտ արտասանությունը:

Խթանման փուլում օ (ո) ձայնավորի ուղղագրությունը վերհիշելու համար երեխաներին ուղղեցինք հետևյալ հարցերը.

1. Ինչպե՞ս է գրվում բառասկզբում լսվող օ հնչյունը:
2. Ինչպե՞ս է գրվում բառամիջում լսվող օ հնչյունը:
3. Ո՞ր դեպքում է բառամիջում լսվող օ հնչյունը գրվում օ տառով:
4. Ինչպե՞ս է գրվում բառասկզբում լսվող **վօ** հնչյունակապակցությունը:
5. Կարո՞ղ եք հիշել բառեր, որոնց բառասկզբում լսվում է օ հնչյունը, սակայն գրվում է ո տառը:
6. Ինչպե՞ս է արտասանվում ո հնչյունը բաղաձայններից հետո:
7. Ինչպե՞ս է արտասանվում ո հնչյունը ձայնավորներից հետո:

Աշակերտները հարցերի պատասխանները հիմնավորեցին համապատասխան օրինակներով:

Կատարեցինք հետևյալ առաջադրանքը.

Լրացնել բաց թողնված տառերը՝ տեղադրելով օ կամ ո:

\_սկան, \_րակ, \_րոի, \_ր, \_զնի, ձկն\_րս, ան\_գուտ, \_գտակար, երեկ\_, \_սկի, \_չնչացնել, այս\_ր, \_րակ, հնա\_ճ, ան\_րոշ, \_վքեր, տ\_թ, շաբաթ\_րյակ, \_րրան, շտապ\_գնություն:

Իմաստի ընկալման փուլում մեկ անգամ ամբողջությամբ ընթերցեցինք բնագիրը և կատարեցինք բառային աշխատանք:

Բացատրության կարիք ունեցող բառեր՝

Կանաչագարդ – կանաչով զարդարված, կանաչապատ:

Սարյակ – երգեցիկ չվող թռչուն:

Վնասատուներ – գյուղատնտեսության, անտառտնտեսության, և պահեստային մթերքներին վնաս հասցնող միջատ:


Ուղղագրական արժեք ունեցող բառեր՝ կանաչագարդ, Ոսկան, Օնիկ, սարյակ, ճյուղ, տախտակ, վերադարձ:

Այնուհետև բնագիրը թելադրեցինք նախադասություն առ նախադասություն: Յուրաքանչյուր նախադասություն գրելուց հետո ընթերցեցինք ամբողջական

Նախադասությունը: Բնագիրի թելադրելն ավարտելուց հետո կրկին ամբողջությամբ ընթերցեցինք բնագիրը ստուգելու նպատակով:

Աշակերտները կատարեցին ինքնաստուգում և հանձնեցին տետրերը:

Աշակերտների աշխատանքների ստուգումից պարզ դարձավ, որ գրանցել ենք հետևյալ ցուցանիշները՝ 35%՝ գերազանց, 25%՝ լավ, 40%՝ բավարար:




Ամփոփելով իրականացրած աշխատանքը՝ կարող ենք նշել, որ բացատրական թելադրությունների կիրառումը կրտսեր դպրոցականների ուղղագրական և ուղղախոսական կարողությունների ձևավորման գործընթացում ունի կարևոր ուսուցողական և զարգացնող նշանակություն: Դրանց փուլային կազմակերպումը նպաստում է ոչ միայն ուղղագրական կանոնների գիտակցված յուրացմանը, այլև երեխաների ուշադրության, լսողական ընկալման, ինքնաստուգման և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Պարզելու համար, թե ինչ արդյունք են տվել մեր կատարած աշխատանքները աշակերտների ուղղագրական կարողությունների զարգացման ուղղությամբ, մենք 4-րդ դասարանում անցկացրինք ստուգողական թելադրություն:

Արդյունքներն ամփոփել ենք տրամագրով:

Գրանցել ենք հետևյալ ցուցանիշները՝ աշակերտների 45%՝ գերազանց, 33%՝ լավ, 22%՝ բավարար:



Այսպիսով, թելադրությունը տարրական դպրոցում ուղղագրական և ուղղախոսական կարողությունների ձևավորման արդյունավետ միջոց է, որը նպաստում է ոչ միայն ուղղագրական և ուղղախոսական կարողությունների զարգացմանը, այլև կատարելագործում են աշակերտների լսողությունը, ուշադրությունը, ինքնուրույն աշխատելու և ինքնարտա հայտման կարողությունները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Յ, Խոսքի զարգացում, Երևան, Չանգակ, 2014, 296 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Յ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., Չանգակ, 2018, 316 էջ:
3. Միրումյան Մ., Հայոց լեզու. Տեսական և գործնական դասընթաց, (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Եր., 2012, 343 էջ:

## SUMMARY

### DEVELOPING SPELLING AND PRONUNCIATION SKILLS IN PRIMARY SCHOOL STUDENTS THROUGH DICTATION

Paytyan Laura, Mirumyan Margush

This article presents the role of dictation exercises in the development of spelling and pronunciation skills of primary school students. Different types of dictation exercises and their impact on students' spelling and pronunciation abilities are analyzed, and the main challenges encountered by learners are also identified.

**Key words and phrases.** *primary school, dictations, spelling and pronunciation skills.*

## ԲԱԺԻՆ 2

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՈՒՅ-ՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

### POSSIBILITIES OF IMPLEMENTING ARTIFICIAL INTELLIGENCE AND VR/AR TECHNOLOGIES IN ELEMENTARY SCHOOL

## GORGİYAN MERI

*International Scientific-Educational Centre of the National Academy of Sciences of the RA*

*Department of Education Management, Master's degree student*

*e-mail:* [meri.gorgiyan@edu.isec.am](mailto:meri.gorgiyan@edu.isec.am)

## KHACHATRYAN SIRARPI

*Candidate of Pedagogical Sciences, Associate Professor of Khachatur Abovian Armenian State Pedagogical University*

*e-mail: Sirarpi81@mail.ru*

### ABSTRACT

The article **aims** to study the possibilities of introducing artificial intelligence (AI), virtual reality (VR) and augmented reality (AR) technologies in the elementary education system and their impact on student motivation and engagement. Special attention was paid to the perception of educational videos presented using VR glasses and the potential of AI in the process of creating such content. The research was conducted using a qualitative **methodology**, including focus groups and observation methods. The **results** show that VR technology stimulates sensory perception and interest, and AR can be a tool for preparing educational materials, providing personalized and interactive lessons.

**Keywords:** *artificial intelligence, virtual reality, elementary education, motivation.*

### INTRODUCTION

The modern education process faces multifaceted challenges, as the focus of attention of the generation raised in the environment of digital technologies requires approaches that differ from traditional pedagogy.

This problem is especially evident in elementary school, as learners prefer visual and sensory-rich environments. In this context, the integration of the latest technologies, especially artificial intelligence (AI), virtual reality (VR) and augmented reality (AR), can play a very significant role in modernizing and motivating learning.

Technological progress always brings great changes in every era. With the change of times, the accompanying components also develop. Studies in the educational sector of developed countries show that the use of information and communication technologies (ICT) plays a great role and significance in improving the quality of education and in the process of creating a civilized individual and citizen [3].

### METHODOLOGY AND DISCUSSION

One of the important areas of our lives that is subject to the influence of the latest digital technologies is education. Virtual reality (VR) and augmented reality (AR) are among the technologies that are

transforming education. Some experts note that education today still uses methods that are outdated and not as effective as many people think. The main concern is that most of the teaching is focused on theory and does not provide students with sufficient opportunities to apply it anywhere. This is why students are unable to retain this information. Education is a field that cannot be separated from technological developments.

**To determine the impact of VR technologies**, we conducted a study at Yerevan Yeghishe Charents Primary School No. 67 using a qualitative methodology, specifically a focus group method. Students in grades 3 and 4 participated. Through focus groups, we aimed to gain a deep and comprehensive understanding of how students perceive and use VR and AR technologies in the educational process, and how they affect their engagement. Group discussions were organized with the participation of students and teachers from educational institutions, ensuring the diversity of their age and learning styles. 4 teachers and 60 students participated in the focus group. After each technology application phase, focus group discussions were organized in the format of open-ended questions, aiming to identify the experiences, perceptions, interests and activity of the learners. The choice of this method is due to the fact that focus groups help to identify not only individual experiences, but also group dynamics, differences of opinion and social aspects of technology use.

The stages of the research implementation included:

1. **Focus group formation.** Selection of participants according to age groups and educational environment, ensuring proportional representation.
2. **Development of questions.** Open-ended questions were presented, which aimed to identify the attitudes, experience of use, challenges and opportunities of the learners.
3. **Conducting a discussion.** During the focus groups, we ensured a free and uninhibited discussion.
4. **Data analysis.** A content analysis was performed based on the recordings and notes, identifying the main theses and trends.

The choice of this method is due to the fact that focus groups help to reveal not only individual experiences, but also group dynamics, differences of opinion and social aspects of the use of technologies.

During the study:

1. Students watched thematic videos through VR glasses, for example, about space and the aquatic world.
2. AR applications were used, which transformed textbook images into 3D models.

The most expressive stage of the research was the organization of focus group discussions and the subsequent viewing of videos through VR glasses. Students watched thematic educational videos about space, planets, the aquatic world and other phenomena. Several topics were mentioned.

After the viewing, they actively shared their impressions in focus groups organized after the viewing. The students' responses indicated that VR technology had a strong impact not only on the visual but also on the emotional level. They emphasized that during the viewing, they “really felt like they were in space or on the seabed”, and some noted: “I felt like I was on a planet”, “it seemed to me that algae, whales and fish were passing by me”, or “it was as if I was immersed in water”. Such responses indicate that the VR environment was able to create a deep sensory learning experience, which strengthened the perception and retention of the educational material.

In addition, students described watching VR as the “most interesting” and “unforgettable” journey that stimulated their interest and engagement. The focus group noted that videos on the same topic shown on a regular computer were considered “ordinary” experiences, while watching VR was considered a “real and impressive journey.” This indicates that students formed a deep emotional connection with the material being taught.

## **CONCLUSIONS**

Analyzing the results of the focus groups, we identified the following main trends:

- The potential of artificial intelligence in creating educational content. If schools are equipped with VR, it will be possible to create educational videos that are relevant to the curriculum and topics of the classes using AI.
- The impact of virtual reality: Videos watched on VR evoked sensory and emotional responses in students. Visual perception and the feeling of becoming a “participant” in the environment contributed to a deeper understanding of the topics.
- The role of augmented reality in the formation of spatial thinking. The use of AR applications, in particular the animation of textbook images, has formed motor and spatial concepts in children, developing analytical and visual thinking.
- The possibility of combining technologies: The interconnected use of AR, VR and AR can transform teaching methodology, ensuring an individual approach, in-depth understanding of the educational material and stimulating interest.

The data obtained during the study prove that educational videos watched with VR glasses form a sensory and emotional connection with the material among junior schoolchildren, contributing to a deeper understanding and memorization of topics. The use of augmented reality develops spatial understanding and thinking, turning textbook images into living, three-dimensional models. The

potential of artificial intelligence in the personalization of educational content and the creation of new educational materials opens up new perspectives, ensuring the modernization of the learning process. The results of the study show that the combined use of technologies can form a more interactive, interesting and effective learning environment, adapted to the age and educational characteristics of students. Therefore, it is advisable to develop technological saturation in schools by introducing VR/AR equipment and AV solutions. This will not only increase students' interest in lessons, but also contribute to the formation of their digital literacy, innovative thinking and analytical skills, bringing the education system in line with modern requirements.

## REFERENCES

1. Daniela L. (2020). *New perspectives on virtual and augmented reality: Finding new ways in a transformed learning environment* (pp. 93–94). Routledge.
2. Guazzaroni, G., & Pillai, S. (2019). *Virtual and augmented reality in education, art, and museums* (pp. 71–72). IGI Global.
3. Lisenkova, A. A., & Mel'nikova, A. Yu. (2018). Tsifrovye media kak zerkalo sovremennoi kul'tury (*Digital media as a mirror of modern culture*). Nauchnoe obozrenie: elektronnyi zhurnal (in Russian).
4. Malespina, L. E. (2018). *Augmented reality in education: Bringing interactivity to libraries and classrooms* (pp. 53–54). Pearson Education.
5. Mentsiev, A. U. (2020). The role of information and communication technologies in modern education. *CITISE*, 71–78.
6. Muuß-Mehrholz, J. (2017). *Was Schulen von Starbucks lernen können. Digitale Gesellschaft Lernplätze in der Technischen Universität Library Delft, Niederlande*.
7. Rösler, D., & Würffel, N. (2017). *DLL, Lernmaterialien und Medien* (p. 192). Klett-Langenscheidt.

## РЕЗЮМЕ

### ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ ТЕХНОЛОГИЙ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА И VR/AR В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Горгиян Мери, Хачатрян Сирарпи

Цель статьи — изучить возможности внедрения технологий искусственного интеллекта (ИИ), виртуальной реальности (VR) и дополненной реальности (AR) в систему начального образования, а также их влияние на мотивацию и вовлечённость учащихся. Особое внимание уделено восприятию учебных видеоматериалов, представленных с помощью VR-очков, и потенциалу ИИ в процессе создания такого контента. Исследование проводилось с использованием качественной методологии, включая фокус-группы и методы наблюдения. Результаты показывают, что технологии VR стимулируют сенсорное восприятие и интерес, а AR может служить инструментом для подготовки учебных материалов, обеспечивая персонализированные и интерактивные занятия.

**Ключевые слова:** *искусственный интеллект, виртуальная реальность, начальное образование, мотивация.*

## **РАЗВИТИЕ ТВОРЧЕСКИХ ЛИТЕРАТУРНЫХ СПОСОБНОСТЕЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ НА УРОКАХ ЛИТЕРАТУРНОГО ЧТЕНИЯ**

**КОЛБИНА ЕКАТЕРИНА АНДРЕЕВНА**

*ФГАОУ ВО «Северо-Кавказский федеральный университет» студент*

*e-mail: [klbnkate@vk.com](mailto:klbnkate@vk.com)*

### **АННОТАЦИЯ**

В статье анализируется развитие творческих литературных способностей младших школьников на уроках литературного чтения. Особое внимание уделено таким приемам, как синквейн, творческое пересказывание, озаглавливание, ассоциативный ковер, даны примеры заданий, которые можно выполнять на уроках по изучению волшебных сказок. Предлагается трехэтапная система занятий, обеспечивающая постепенное углубление в мир сказки и развитие творческого потенциала учащихся. Статья подчеркивает важность создания условий для раскрытия творческого потенциала каждого ребенка.

**Ключевые слова:** *творческие способности, литературное чтение, методы, приемы, младший школьный возраст, синквейн, творческое пересказывание, ассоциативный ковер, альтернативная мораль.*

Развитие литературных, а также творческих способностей у младших школьников остается одной из наиболее актуальных задач современного образования.

Многие исследователи, такие как В.В. Зеньковский, Д.Н. Никандров, З.И. Равкин, В.А. Сластенин, отмечали, что творчество и творческие способности органически присущи детской природе, так как ребенок «неизменно стремится к творчеству, пользуясь всеми доступными ему средствами» [2, с. 346]. Л.А. Большакова утверждает, что творческие способности – это сложное личное качество, отражающее способность человека к творчеству в разных сферах жизнедеятельности, а также позволяющее оказывать помощь в творческой самореализации другим людям. Они представляют собой сложное личностное качество, лежащее в основе самовыражения и самореализации, и требуют от педагогов создания условий, в которых это врождённое стремление к творчеству могло бы полноценно развиваться и находить своё выражение [3, с.14].

Уроки русского языка и литературного чтения являются той основой, на которой творческий потенциал, заложенный в каждом ребенке, сможет раскрыться и развиваться. Художественные произведения для детей, а в первую очередь русские народные сказки о семье становятся мощным инструментом, объединяющим культурные традиции, нравственное воспитание и развитие творческого мышления.

Анализ современных исследований позволяет выделить ключевые компоненты творческих способностей младших школьников: творческое воображение, гибкость мышления, беглость мысли. Поэтому младший школьный возраст является благоприятным периодом для развития этих компонентов.

По мнению А. Г. Гогоберидзе, детское творчество отличается двумя ключевыми особенностями, придающими ему особую ценность в процессе развития личности. Во–первых, оно характеризуется субъективной новизной. Во–вторых, продукт детского творчества – это не просто результат, а глубокое отражение внутреннего мира ребёнка.

Такие произведения, как «По щучьему веленью», «Царевна–лягушка» или «Сивка–бурка», позволяют обучающимся не только погрузиться в волшебство, но и осмыслить фундаментальные ценности: любовь, заботу, взаимопомощь, трудолюбие и справедливость. Важно, что восприятие сказок младшими школьниками часто отличается от взрослого – ученики дают неожиданные трактовки морали, что свидетельствует об их способности критически мыслить и видеть альтернативные решения.

Представленные методы и приемы органично вписываются в структуру урока и не требуют значительных временных затрат:

1. Синквейн – метод, позволяющий учащимся показать не только свои знания, но и глубину понимания темы. Например, при работе со сказкой «Царевна-лягушка» дети могут создать синквейн о Василисе Премудрой: «Василиса – мудрая, красивая – ткёт, превращается, спасает – царевна-лягушка – царица».

2. Творческое сочинение. Развивает воображение, гибкость и беглость мышления, ориентацию во времени, умение четко формулировать мысли. Например: «Представь, что ты стал(а) на один день главой семьи из сказки «По щучьему веленью». Как бы ты распорядился(ась) властью?».

3. Творческое списывание. Способствует слиянию обучения и воспитания в единый органический процесс. Например, переписать начало сказки «Репка», добавив детали о семейных отношениях персонажей.

4. Озаглавливание помогает увидеть главную мысль произведения. Обучающимся можно предложить придумать три разных заголовка для одной сказки и объяснить свой выбор. Например, для сказки «Сивка-бурка» возможны заголовки: «Как Иван-дурак нашел счастье», «Семейные ценности в сказке» или «Верность и смелость».

5. Творческое пересказывание. Помогает вызвать у учеников эмоциональный отклик на читаемое произведение, помогает им глубже осознать идею произведения. Например, пересказать сказку «Царевна-лягушка» от лица лягушки или от лица Ивана-царевича.

6. Словесное рисование. Повышает эмоциональный уровень восприятия художественного текста. Дети закрывают глаза, слушают описание сказочного места (например, избушки на курьих ножках), а затем словами передают свои впечатления.

7. Графическое рисование (создание иллюстраций). Способствует формированию и развитию графических навыков, памяти, внимания и воображения. Например, нарисовать, как выглядит семья Ивана-дурака до и после его удач.

8. Ассоциативный ковер – задание творческого характера, направленное на обогащение словарного запаса, развитие воображения, гибкости и беглости мышления. Например, для сказки «Репка» можно создать ассоциативный ковер со словами: репка, дед, бабка, внучка, Жучка, кошка, мышка, тянут, дружба, вместе, сила, помощь, работа, успех.

Основой педагогического процесса выступает следующая система этапов:

На первом этапе – «Вхождение в мир сказки» – основная цель заключается в создании устойчивого интереса к сказкам и развитии эмоциональной отзывчивости у обучающихся. Для

достижения этой цели педагоги используют тематические часы с применением музыкального сопровождения и иллюстраций, организуют создание «паспорта сказочного героя», а также проводят игры на узнавание сказок по фрагментам. Ярким примером такой работы может служить «Литературная гостиная «Герои сказки», где после беседы о персонажах сказки «По щучьему веленью» младшие школьники рисуют портреты главных героев, используя эпитеты, встречающиеся в тексте произведения.

Следующий этап – «Глубокое погружение» направлен на развитие аналитического мышления и формирование умения выражать собственное мнение. На этом этапе педагогическая работа включает обсуждение морали сказок, проведение дебатов о героях, работу с пословицами и создание моделей семейных структур, представленных в сказках. Хорошей иллюстрацией этого этапа могут служить дебаты на тему «Кто в сказке самый умный?», где учеников разделяют на команды, каждая из которых защищает своего героя.

Третий этап – «Творческая переработка» ставит своей целью формирование навыков соавторства и создания новых произведений. На этом этапе активно используются методы сочинения альтернативных концовок, адаптации традиционных сюжетов к современному времени и коллективного сочинения новых сказок. Примером может служить проект «Сказка в современном мире», где дети адаптируют сюжет «По щучьему веленью» к реалиям сегодняшнего дня, заменяя волшебную щуку на компьютерную программу, выполняющую желания.

Завершающим элементом системы выступает проектная деятельность, которая объединяет полученные навыки и знания в целостные творческие продукты. Она охватывает индивидуальные проекты, такие как «Семейное древо героя сказки» или «Костюмы для героев», коллективные проекты, включая создание книги «Наша книга сказок» и организацию «Недели русского фольклора», а также исследовательские проекты, например, «Отгадай сказку по пословице» или «Сказка ложь, да в ней намек: мораль в русских народных сказках».

Исследования показывают высокую эффективность такой работы: после систематических занятий в кружках уровень высокого воображения у детей повышается с 12% до 26%, а доля детей с высоким уровнем творческих способностей увеличивается с 20% до 54% [6, с.31].

Для успешного формирования творческих способностей младших школьников в процессе работы с русскими сказками учителю необходимо придерживаться следующих рекомендаций:

1. Создание творческой атмосферы;

2. Индивидуальный подход;
3. Свобода выбора и самовыражения;
4. Интеграция творчества во все аспекты обучения.

Через сказки младшие школьники учатся видеть мир во всем его многообразии, развивают эмпатию, учатся аргументировать свою позицию и находить нестандартные решения – навыки, которые будут востребованы им на протяжении всей жизни.

Результатом такой работы становится не только формирование литературных навыков, но и воспитание творческой, инициативной и социально адаптированной личности, способной к самостоятельному поиску и решению жизненных задач – личности, готовой к тем вызовам, которые поставит перед ней будущее.

## **ЛИТЕРАТУРА**

1. Выготский Л. С., Мышление и речь / Л. С. Выготский. – М.: Просвещение, 1987. – 288 с.
2. Зеньковский В. В., Психология детства / В. В. Зеньковский. – М.: Издательство Московского университета, 1996. – 346 с.
3. Большакова, Л. А., Развитие творчества младшего школьника / Л. А. Большакова// Завуч начальной школы. – 2002 – № 2 – С. 12–16.
4. Брушлинский А.В., Субъект. Мышление, учение, воображение. – М.: Воронеж, 1996. – 145 с.
5. Гогоберидзе А.Г., Теория и методика музыкального воспитания детей школьного возраста / А.Г. Гогоберидзе, В.А. Деркунская. М.: Академия, 2005. – 320 с.
6. Марченко А. А., Проектная деятельность как условие развития творческих способностей младших школьников / А. А. Марченко // Педагогика и психология образования. – 2021. – № 2. – С. 31–40.
7. Яцкова О. Ю., Проблема развития творческих способностей детей в педагогике XX в. / О. Ю. Яцкова // Теория и практика образования в современном мире: материалы международной научной конференции (г. Санкт–Петербург, февраль 2012). – СПб.: Издательство СПбГУ, 2012. – С. 73–76.

## **SUMMARY**

## DEVELOPMENT OF CREATIVE LITERARY ABILITIES OF PRIMARY SCHOOL STUDENTS IN LITERATURE READING LESSONS

Kolbina Ekaterina

The article is devoted to the development of creative abilities in primary school students during literature reading lessons. It examines effective methods and techniques such as cinquain, creative retelling, and titling, which can be implemented within lessons on studying fairy tales. The importance of creating conditions for each child's creative self-expression is emphasized.

**Keywords:** *creative abilities, literature reading, methods, techniques, primary school age, cinquain, creative retelling, associative carpet, alternative moral.*

## ИСПОЛЬЗОВАНИЕ АРТ-ПЕДАГОГИКИ НА УРОКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Այս հարցի պատասխաններից պարզ դարձավ, որ առավել տարածված են խմբային և զույգերով աշխատանքը՝ 45%, ինչպես նաև T-աձև աղյուսակը՝ 33%, ինչը համեմատաբար նախընտրելի մեթոդ է: «Վեկի դիագրամը» ավելի քիչ է կիրառվում՝ 22%, իսկ «Բանավեճի մեթոդը» չի կիրառվում՝ ինչը մատնանշում է դրա նկատմամբ սովորողների կամ ուսուցիչների թերահավատությունը կամ մեթոդի դժվար կիրառումը:

Հարցաթերթիկի **երրորդ** հարցով փորձել ենք պարզել փոխգործուն մեթոդների կիրառման գործընթացում գրանցած արդյունքները:




Այս հարցին ուսուցիչների տված պատասխաններից պարզ է դառնում, որ նշված մեթոդների արդյունավետությունն ուսուցիչները գնահատում են հիմնականում «Լավ» 67%-ը կամ բավարար `33%-ը : «Գերազանց» գնահատականներ չկան, ինչը կարող է լինել որպես առավել բարելավման հնարավորության ցուցիչ:

Հաջորդ՝ **չորրորդ** հարցով, փորձել ենք պարզել, թե ուսուցիչների կարծիքով որքանով է փոխգործուն մեթոդների կիրառումը նպաստում կարդացած սեղծագործության կերպարների խորքային ըմբռնմանը:




Այս հարցին ուսուցիչների տված պատասխանները վկայում են , որ 54%-ը կարծում է, որ մեթոդները շատ են նպաստում կերպարի խորքային ըմբռնմանը, ինչը խրախուսելի է: 33%-ը նշել է «որոշ չափով» պատասխան-տարբերակը, իսկ մեկը դժվարացել է պատասխանել:

**Յինգերորդ** հարցի միջոցով պարզել ենք, թե ուսուցիչներն ինչ դժվարություններ են ունենում փոխգործուն մեթոդները կիրառելիս:



Ուսուցիչների 56%-ի մոտ խնդիրներ է առաջանում ժամանակի սահմանափակումից, իսկ 44%-ի մոտ՝ աշխատանքի կազմակերպման դժվարութ յունից, ինչը ցույց է տալիս, որ ուսուցիչները հիմնականում մարտահրավեր են տեսնում դասաժամի սահմանափակ լինելու և աշխատատար գործունեության մեջ: Այլ խնդիրներ չեն արձանագրվել:

Վերջին՝ **վեցերորդ** հարցով ուսուցիչներից խնդրել էինք ներկայացնել առաջարկներ :




Արդյունքներից պարզ դարձավ՝ ամենաառաջնահերթ առաջարկությունները վերաբերում են մեթոդների հստակ պլանավորմանը՝ 45%-ը սովորողների դրդապատճառներին, 33%-ը՝ նախապատրաստմանը, ինչպես նաև՝ 22%-ը՝ ինքնուրույնության խթանմանը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ փոխգործուն մեթոդների կիրառությունը մայրենիի դասերին, մասնավորապես ստեղծագործության կերպարների վերլուծության ժամանակ, ուսուցիչների շրջանում ընդունված է և հիմնականում գնահատվում է որպես արդյունավետ միջոց: Մեթոդները համարվում են աշակերտների կողմից ընթերցված ստեղծագործությունների կերպարների խորքային ըմբռնման ու վերլուծելու համար օգնող գործիք:

Ուսուցիչները մասնավորապես կարևորում են մեթոդների նախապես մանրամասն պլանավորումը և սովորողների նախապատրաստումը, որպեսզի ուսուցման գործընթացը դառնա ավելի արդյունավետ և ընդգրկի բոլոր աշակերտներին:

Մենք ուսումնասիրություններ ենք իրականացրել ենք նաև սովորողների շրջանում (Վ.Սարգսյանի չորրորդ դասարանի դասագրքի՝ «Յոթ սարից,յոթ ձորից այն կողմ» թեմատիկ խմբի շուրջ[1,103-135]): Հարցախույզի միջոցով պարզել ենք սովորողների կարծիքով փոխգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը, դրանց միջոցով կարդացած ստեղծագործությունների կերպարների նկարագրերը, գործողությունները, վերլուծելու կարողությունը, և սովորողների կարծիքով որքանով են այդ մեթոդները նպաստում կարդացած ստեղծագործության կերպարների խորքային ըմբռնմանը:

Հաշվելով և տոկոսային հարաբերությամբ վերլուծելով ձեռք բերած տվյալները՝ ստացանք հետևյալ արդյունքները. «Գերազանց» ստացել է դասարանի 14%-ը: Այս աշակերտները ճիշտ են պատասխանել բոլոր հարցերին, «լավ» արդյունք գրանցել է դասարանի 27%-ը( Նրանք մեծամասամբ ճիշտ էին կատարել առաջադրանքները): Աշակերտների 59%-ը ստացել էր «բավարար» արդյունք, նրանք բավարար քանակությամբ ճիշտ պատասխաններ էին տվել:



Մեր ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին, որ սովորողները

ճիշտ են պատասխանել հիմնականում այն հարցերին, որոնք չեն պահանջում որևէ հերոսի արարքի գնահատում, դատողություններ կամ ստեղծագործական միտք: Սա նշանակում է, որ նրանք դժվարանում են նշված տեսակներով խոսք կառուցել:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Վ., Մայրենի 4, ՄԱՆՄԱՐ, Երևան, 2022:
2. <http://www.old.ysu.am/files/7-1510223938-.pdf>
3. <https://arar.sci.am/dlibra/publication/391004/edition/361673/content>

### SUMMARY

#### THE APPLICATION OF INTERACTIVE METHODS IN THE ANALYSIS OF CHARACTERS IN LITERARY WORKS

**Vardanyan Ruzanna, Simonyan Varditer**

The article discusses the effectiveness of interactive methods, particularly in the process of analyzing literary characters. The study also included a survey conducted among both teachers and students, which provided insights into their experiences and opinions on the use of interactive methods. The results suggest that interactive methods can enhance student engagement and deepen understanding of literary characters. Overall, the findings highlight that integrating interactive approaches into literature lessons can lead to positive outcomes.

**Key words:** *elementary school, interactive method, characters analysis.*

### ՏՏ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

#### ՆԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՅ, ՏՄՄ ԲԿԾԱ, 4-րդ կուրսի ուսանողուհի  
Էլ. հասցե՝ [nanyannarine-8@aspu.am](mailto:nanyannarine-8@aspu.am)

#### ՄԻՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԳՈՒՇ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՅ, մ. գ. թ., դոցենտ  
Էլ. հասցե՝ [mirumyan1951@aspu.am](mailto:mirumyan1951@aspu.am)

## ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) վերջին տարիներին մեծապես ներթափանցել են կրթության բոլոր ոլորտներ՝ նպաստելով ուսումնական գործընթացի արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Մայրենիի ուսուցման գործընթացում SS միջոցների ներդրումն ընձեռում է հնարավորություն՝ դասերը առավել գրավիչ, դինամիկ և աշակերտակենտրոն դարձնելու: Մեր ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցման արդիականացման գործընթացում SS միջոցների ներդրման ժամանակակից պահանջների կատարման, դրանց շնորհիվ մայրենիի դասերին կարգացած ստեղծագործության նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացման գործընթացի արդյունավետ կազմակերպման, այդ ուղղությամբ կրտսեր դպրոցականների հետ անցկացվող աշխատանքների պլանավորման և տարրական դպրոցում կատարվող աշխատանքների անկատարությամբ:

***Բանալի բառեր՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, տարրական դպրոց, հետաքրքրության զարգացման միջոց, դասերի ճկունություն, սովորողակենտրոն կրթություն:***

Մեր ուսումնասիրության խնդիրներն են եղել.

1. Վերլուծել SS միջոցների կիրառման հնարավորությունները մայրենիի դասերին:
2. Բացահայտել տարրական դպրոցում կիրառվող այն մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք առավել արդյունավետ են ընթերցանության նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացման գործընթացում:
3. Ուսումնասիրել սովորողների արձագանքներն ու ակտիվությունն ինտերակտիվ դասերի ժամանակ, վերլուծել արդյունքները:
4. Մշակել և կիրառել մեթոդական լուծումներ՝ մայրենիի դասերին SS միջոցների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք հետևյալ հետազատական մեթոդները. հետազոտության թեմային վերաբերող մեթոդամանկավարժական գրականության ուսումնասիրում, հարցախույզ ուսուցիչների շրջանում, փորձարարական դասերի վարում ու արդյունքների վերլուծություն:


Մեր ուսումնասիրությունն իրականացրել ենք «Գլոբալ բրիջ» կրթահամալիրի 2-րդ դասարանում: Ուսումնասիրությանը մասնակցել են 15 սովորող, 10 ուսուցիչ:

Անառարկելի է, որ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաները կյանքի բոլոր ոլորտներում կիրառվում են ընդարձակ մասշտաբով, և կրթությունը չի կարող մնալ դրանցից դուրս: SS-ի ներդրումը հանրակրթության ոլորտում, հատկապես՝ տարրական դասարաններում, նոր մոտեցումներ ու հնարավորություն է ընձեռում ուսուցման արդյունավետության բարձրացման համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղեկատվական տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում տալիս են ինտերակտիվ միջավայր ստեղծելու հնարավորություն, որը խթանում է սովորողների հետաքրքրությունը, ինչպես առերես, այնպես էլ հեռավար դասերի ընթացքում, նրանց մղում է ակտիվ մասնակցության: SS կիրառելու միջոցով ուսուցիչը կարող է օգտվել բազմազան ռեսուրսներից (տեսանյութեր, ուսումնական խաղեր, էլեկտրոնային հղումներ), որոնք նպաստում են ուսուցման գործընթացի զարգացմանը [1, 134]:

Հեռավար ուսուցման հարթակների կիրառումը կարևոր դեր ունի սովորողների ճանաչողական հետաքրքրության զարգացման գործում: Այն օգնում է սովորողներին միանալ տարբեր ուսումնական ռեսուրսներին, ձեռք բերել նոր գիտելիքներ՝ անկախ նրանց գտնվելու վայրից [2, 125]:

Դասվարների շրջանում անցկացրինք հարցախույզ, որպեսզի պարզենք, թե տարրական դպրոցի ուսուցիչները SS-ի ներդրմամբ ի՞նչ աշխատանքներ են իրականացնում մայրենիի դասերի շրջանակներում, մասնավորապես՝ կարդացած ստեղծագործության նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացման համատեքստում և ի՞նչ դժվարությունների են հանդիպում:


**Հարցաթերթիկի առաջին հարցով պարզել ենք, թե ուսուցիչներն ունեն արդյոք SS միջոցներ իրենց դասասենյակում (համակարգիչ, սմարթֆոն, ապրատախտակ, պրոյեկտոր, պլանշետներ և այլն):**




Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 70 %-ը պատասխանել է՝ «Այո», իսկ 30 %-ը՝ «Ոչ»: Պարզ է, որ ոչ բոլոր ուսուցիչներն ունեն SS միջոցներ օգտագործելու հնարավորություն:

**Երկրորդ հարցով պարզել ենք, թե մայրենիի դասերին ուսուցիչներն ինչ հաճախականությամբ են օգտվում SS միջոցներից:**

Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 90 %-ը նշել է՝ «շաբաթական մի քանի անգամ», իսկ 10 %-ը՝ «յուրաքանչյուր դասի» պատասխան-տարբերակները: Պարզ է, որ ուսուցիչների մեծ մասը SS միջոցներից օգտվում է շաբաթական մի քանի անգամ, բայց կան նաև ուսուցիչներ, ովքեր SS կիրառում են մայրենիի բոլոր դասերին:




**Հարցաթերթիկի երրորդ հարցով պարզել ենք ուսուցիչների կարծիքն այն մասին, թե արդյոք SS միջոցները նպաստում են սովորողների գրական ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը:**



Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 50%-ը կարծում է, որ SS միջոցները որոշ չափով են նպաստում գրական ստեղծագործությունների նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացմանը, իսկ 30%-ը կարծում է՝ «շատ»: 10%-ը նշել է՝ «ոչ այնքան», իսկ մյուս 10%-ը՝ «ոչ» պատասխան-տարբերակները: Այնինչ պարզ է, որ SS նպաստում է գրական ստեղծագործությունների նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացմանը:


**Չորրորդ հարցով պարզել ենք, թե ուսուցիչները որ ձևաչափով են առավել արդյունավետ համարում SS միջոցների կիրառումը գրական տեքստի ուսումնասիրման ժամանակ:** (Գրական ստեղծագործության բովանդակության տեսողական ներկայացում, տեսահոլովակ, անիմացիա և այլն), ինտերակտիվ վիկտորինաներ կամ խաղեր, ստեղծագործության թեմայի շուրջ ստեղծագործական աշխատանքների թվային ներկայացում, դասավանդման այլ մեթոդներ):

Ստեղծագործական աշխատանքների թվային ներկայացում



Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 50%-ը առավել արդյունավետ է համարում «գրական ստեղծագործության բովանդակության տեսողական ներկայացումը», 40%-ը՝ «ինտերակտիվ վիկտորինաները կամ խաղերը», իսկ 10%-ը՝ «տեքստի թեմայի շուրջ ստեղծագործական աշխատանքների թվային ներկայացումը» պատասխան-տարբերակները: Պարզ է, որ ուսուցիչների մեծ մասը կարծում է, որ տեսահոլովակները, անիմացիաները առավել շատ պետք է կիրառեն գրական ստեղծագործության ուսումնասիրության ժամանակ: Մասնակիցների 40%-ը արդյունավետ է համարում վիկտորինաները, կամ խաղային այլ տեխնիկաները, իսկ 10%-ը արդյունավետ է համարում ստեղծագործական աշխատանքների թվային ներկայացումը:

**Հարցաթերթիկի հիևգերերդ հարցով պարզել ենք, թե ուսուցիչների շրջանում ինչ խնդիրներ են առաջանում SS միջոցների կիրառման ժամանակ:**



Հարցախույզին մասնակցած ուսուցիչների 40%-ը նշել է՝ «տեխնիկական խոչընդոտները» (օրինակ՝ ինտերնետի բացակայություն կամ սարքավորումների խափանում), 30%-ը՝ «ժամանակի սահմանափակումները դասի ընթացքում», 20%-ը՝ «SS


գործիքների կիրառման հմտությունների պակաս» պատասխան-տարբերակները: Այս փաստերն ընդգծում են, որ SS միջոցների լիարժեք կիրառման համար անհրաժեշտ է ուսուցիչների շարունակական վերապատրաստում, ինչպես նաև՝ տեխնիկական միջոցների ապահովում:

Հաշվի առնելով ուսուցիչների շրջանում անցկացրած հարցախույզի արդյունքները՝ մենք տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ վարել ենք մի շարք դասեր: Այսպես երկրորդ դասարանի մայրենիի դասի ընթացքում ուսումնասիրվեց Պուշկինի «Առավոտ» բանաստեղծությանը: Դասը կազմակերպվեց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ՝ նպատակ ունենալով ստեղծել բանաստեղծությանն առնչվող հուզական, պատկերավոր միջավայր: Խթանման փուլում սովորողներին ցուցադրվեց տեսասահիկ՝ լուսաբացին բնության զարթոնքը պատկերող նկարներով՝ արևածագ, բացվող ծաղիկներ, թռչունների թռիչք, մայրամուտ և այլն: Սովորողների տրամադրությունն ու ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով սա ուղեկցվեց մեղմ երաժշտությամբ: Այս աշխատանքից պարզ դարձավ, որ սովորողների ուշադրությունն այս տարբերակով ավելի լավ է կենտրոնանում տեսասահիկի նկարների միջոցով, քան դասագրքում տեղ գտած նկարների: Իմաստի ընկալման փուլում սովորողներին բաժանվեց թերթիկներ, որտեղ ներկայացված էին կարդացած բանաստեղծության մեջ հանդիպող անծանոթ կամ ուղղագրական արժեք ունեցնող բառեր (օրինակ՝ «այգ», «ցող», «մեգ» և այլն): Նրանք բացատրեցին այդ բառերը՝ օգտվելով տեսասահիկով ներկայացված նկարներից: Մեր նպատակն էր եղել տեսական նյութը կրկնել տեսողական կապով:

SS կիրառել ենք նաև այդ դասի ընթացքում սովորողների ձեռք բերումների գնահատման ժամանակ՝ ցուցադրելով նշանակետի նկար՝ հանձնարարելով, որ նրանք սահիկի վրա գնահատեն իրենց ստացած գիտելիքներն ըստ նշանակետի կենտրոնին մոտ գտնվելու: Այս աշխատանքի նպատակն է եղել իրականացնել սովորողների գիտելիքների գնահատում, հասկանալ SS-ից օգտվելու սովորողների ունակությունների մակարդակը: Ընդհանուր առմամբ, SS-ի կիրառմամբ «Առավոտ» բանաստեղծության ուսումնասիրումը ստեղծեց հարմարավետ, հետաքրքիր և արդյունավետ ուսումնական միջավայր, որը նպաստեց գրական ստեղծագործության բովանդակության ընկալմանը:

Հավաքագրելով և խմբավորելով սովորողների տված պատասխանները ստեղծագործության գաղափարի, բանաստեղծության մեջ եղած ուղղագրական արժեք, իմաստի բացատրության կարիք ունեցող բառերի և դասի ընթացքում իրականացված

ամբողջ աշխատանքի մասին՝ գրանցել ենք հետևյալ ցուցանիշները՝ 60%-ը «գերազանց», 30%-ը «լավ», 10%-ը «բավարար»:



Ամփոփելով՝ նշենք, որ SS-ի կիրառումը մայրենիի դասերի ըթացում ստեղծում է զարգացնող, հետաքրքիր և ուսուցողական միջավայր, որն արդի կրթության կարևոր բաղադրիչներից մեկն է: SS գործիքների ներդրումը (տեսասահիկներ, պատկերներ, ձայնային ուղեկցություն, վիդեոնյութեր և փոխներգործուն հնարներ) նպաստում է ոչ միայն աշակերտների ուշադրության ակտիվացմանը, այլ նաև խթանում է նրանց երևակայությունը, ստեղծագործական կարողությունները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Ջ., Նախաբ.՝ Լ. Ռոբերտոսն, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսումնական ձեռնարկ, Երևան 2004, 226 էջ:
2. Բեգիրջյան Խ., Բաբայան Ս., Խաչատրյան Վ., Ջեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, Եր.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2017թ.- 152 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, 341 էջ:

### SUMMARY

#### THE USE OF ICT TOOLS IN NATIVE LANGUAGE LESSONS AS A MEANS OF FOSTERING STUDENTS' INTEREST IN THE LITERATURE THEY READ

Nanyan Narine, Mirumyan Margush

In the article, we have developed and tested the role of ICT tools in native language lessons as a means of enhancing students interest in literature: based on research, surveys, and ICT-integrated teaching practices.

**Key words:** *Information technologies, primary school, a means of developing interest, instructional flexibility, learner-centered education.*

## **ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԳՐԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԽԹԱՆԻՉ**

### **ՍԱՖԱՐՅԱՆ ՆՈՒՇԻԿ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԴՄՀ, ՏՄՄ, ԲԿԾԱ 4-րդ կուրս*

*Էլ. հասցե՝ [safaryannush@gmail.com](mailto:safaryannush@gmail.com)*

### **ԱՎԱԳԻՄՅԱՆ ԱՐԻՆԵ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀԴՄՀ, ք. գ. թ., դոցենտ*

*Էլ. հասցե՝ [avagimyanarine42@aspu.am](mailto:avagimyanarine42@aspu.am)*

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է դարձվածքների և ասացվածքների դերը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում՝ շեշտելով դրանց ուսումնական, լեզվական, կրթադաստիարակչական և մշակութային նշանակությունը: Դարձվածքներն ու ասացվածքները դիտարկվում են որպես ազգային լեզվամտածողության ու արժեքային համակարգի հիմնական դրսևորումներ, որոնք ոչ միայն հարստացնում են սովորողների խոսքը և զարգացնում մտածողությունը, այլև նպաստում են ազգային ինքնության ձևավորմանը:

Իրականացված հարցախույզի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսուցիչների մեծ մասը դարձվածքներն ու ասացվածքներն ուսումնասիրելիս առաջնահերթ կարևորում է դրանց դաստիարակչական գործառույթը:

Հոդվածում ներկայացված վարժությունները ցույց են տալիս, թե ինչպե՛ս կարելի է զարգացնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական ու քննադատական մտածողությունը և պատկերավոր խոսքը:

**Բանալի բառեր՝** դարձվածքներ, ասացվածքներ, ազգային լեզվամտածողություն, արժեհամակարգ, գործնական մեթոդ, տեսական մեթոդ, գննական մեթոդ, պատկերավոր խոսք:

Դարձվածքներն ու ասացվածքները հայ ժողովրդի ազգային լեզվամտածողության և արժեհամակարգի կարևորագույն դրսևորումներից են. դրանք ոչ միայն խոսքի պատկերավոր միջոցներ են, այլև կուտակված կենսափորձի, դաստիարակչական սկզբունքների ու հասարակական հարաբերությունների արտացոլում, ուստի տարրական դպրոցում դրանց ուսումնասիրությունը համարվում է ինչպես լեզվական և գրական, այնպես էլ կրթադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչ:

Դարձվածքների և ասացվածքների ընկալումն ու գործածումը նպաստում են սովորողի խոսքի, մտածողության զարգացմանը, ազգային ինքնության գիտակցմանը և բարոյահոգեբանական արժեքների յուրացմանը: Դարձվածքների կառուցվածքային-ոճական յուրահատկություններից է նրանց բաղադրիչների կայունությունն ու անփոփոխելիությունը, սակայն միշտ չէ, որ ոճական նպատակադրմամբ կամ պարզապես հեղինակային այս կամ այն նախադասությամբ արդեն իսկ ընտրված և գործածական որոշ դարձվածքներում գրողները կատարում են զանազան բնույթի փոփոխություններ ինչպես բառային կազմի, նրանց արտահայտած իմաստի, այնպես և բաղադրիչների շարադասառության առումով [1, էջ 373] :

Դարձվածքների շարքին են դասվում.

1. գրական ծագում ունեցող թևավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտությունները, զանազան ասույթները, որոնք թևավոր խոսք են դարձել և խզել են իրենց կապը նախնական բնագրից՝ ձեռք բերելով ընդհանուր իմաստ, օրինակ՝ *Ձախորդ Փանոս, Քաջ Նազար* և այլն:

2. ժողովրդական խոսակցական անեծքները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական իմաստ ստանալով՝ վերածվել են դարձվածքների, ինչպես՝ *անուևդ կտրվի, հողը դնեմ, հողեմ գլուխդ* և այլն:

3. Առած-ասացվածքային արտահայտությունները, որոնք վերածվել են դարձվածքների, ինչպես՝ *գայլի գլխին ավետարան կարդալ, ճտերը աշնանը հաշվել* և այլն:

Ուսումնասիրման գործընթացում առաջանում են մեթոդական և կիրառական որոշ խնդիրներ, որոնք պահանջում են համակողմանի ուսումնասիրություն: Սույն


հողվածում փորձել ենք բացահայտել նշված խնդիրները և տալ մեր կողմից առաջադրվող լուծումներ:

Պ. Բեդիրյանն իրավացիորեն նշում է. «Դարձվածքների առաջացման անսպառ աղբյուրը հենց ինքը՝ կենդանի ընդհանուր լեզուն է իր կիրառության բոլոր ոլորտներով [2, էջ 182]»:

Տարրական դասարաններում դարձվածքների և ասացվածքների ուսումնասիրման առավել արդյունավետ մեթոդներն ու մեթոդական հնարները բացահայտելու նպատակով 2024 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամսներին իրականացրել ենք հարցախույզ տարրական դասարանների ուսուցիչների շրջանում:

Ուսումնասիրության առաջին փուլում, ելնելով մեր առջև դրված խնդիրներից, որոշվել է հետազոտության անցկացման վայրը: Ուսումնասիրությանը մասնակցել են տարրական դասարանների 20 ուսուցիչ, 65 սովորող, ամփոփման փուլում իրականացվել է հարցախույզի արդյունքների քանակական և որակական վերլուծություն: Ներկայացնենք վերլուծության արդյունքները:

Հարցաթերթիկի առաջին հարցի պատասխանների վերլուծությունից պարզվեց, թե դարձվածքներն ու ասացվածքներն ուսումնասիրելիս ո՞ր մեթոդներն են առավել նպատակահարմար կիրառել: Հարցին կից տվել ենք նաև պատասխանների տարբերակներ:




Տրամագիր 1.

Հարցմանը մասնակցած ուսուցիչների 71%-ն ընտրել է «գործնական», 15%-ը «զննական», իսկ 14%-ը՝ «տեսական» տարբերակները՝ կարծելով, որ որքան էլ սովորողները ձեռք բերեն տեսական գիտելիքներ, այնուամենայնիվ, գործնականորեն նրանք ավելի շատ կարողությունների կտիրապետեն: Սովորողները ոչ միայն անգիր են սովորում տվյալ դարձվածքն ու ասացվածքը, այլև գիտելիք են ձեռք բերում գործնական ճանապարհով: Այդ նպատակով թե՛ մայրենիի դասերի ժամանակ, թե՛ տանը ուսուցչի

հանձնարարությամբ պետք է իրականացնել ուսումնասիրվող լեզվական իրողությանը վերաբերող վարժությունների համակարգ:

Մեզ հետաքրքրում էր նաև, թե դարձվածքների ու ասացվածքների ուսումնասիրման ո՞ր գործառույթն են առավել կարևորում տարրական դասարանների ուսուցիչները:

Այս հարցին կից ևս տվել էինք պատասխանների տարբերակներ:



Տրամագիր 2.

Հարցաթերթիկի այս հարցին ուսուցիչների տված պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դարձվածքների ու ասացվածքների ուսումնասիրման գործընթացում առավել կարևոր տեղ է տրվում նրանց դաստիարակչական գործառույթին (51%): Սա ցույց է տալիս, որ ուսուցիչների մեծամասնությունը կարևորում է դարձվածքների և ասացվածքների դերը ոչ միայն սովորողների լեզվական կարողությունների զարգացման առումով, այլ նաև դաստիարակության, արժեքների, մարդկային հատկանիշների և վարքի ձևավորման գործընթացում: Ուսուցողական գործառույթն ուսուցիչները նույնպես կարևորել են. նրանց 29%-ը նշում է, որ այն հատկապես նպաստում է ուսուցման գործընթացին՝ վերջինս դարձնելով ավելի բազմազան և հասկանալի: Չարգացնող գործառույթը նշել է ուսուցիչների 8%-ը, ինչը ցույց է տալիս, որ մասնակիցները դեռևս քիչ են կարևորում դարձվածքների ու ասացվածքների նշանակությունն ուսումնական գործունեության մեջ: Առաջարկել էինք նաև «այլ տարբերակ» պատասխանը, որն ընտրել էին հարցմանը մասնակցած ուսուցիչների 12%-ը՝ նշելով, որ այլ գործառույթներ ևս առկա են, ինչպես՝ սովորողների տրամաբանությունը զարգացնող, որոնք կարևոր են այս նյութերի ուսումնասիրության ընթացքում, բայց դրանք քիչ տարածում ունեն՝ համեմատած հիմնական գործառույթների հետ:

Ընդհանուր առմամբ, ուսուցիչների տված պատասխանների մեջ դաստիարակչական գործառույթը հիմնականում գերակշռում է, ինչը վկայում է, որ

ուսուցիչները վստահ են՝ դարձվածքները ու ասացվածքներն առավելապես նպաստում են սովորողների արժեքների և հոգևոր դաստիարակության զարգացմանը:

Ներկայացնենք նաև մեր կողմից կազմված լեզվական վարժությունների համակարգից մի քանի վարժություն, որոնց նպատակն էր զարգացնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողությունը, իմացական կարողությունները, դարձվածքների վերաբերյալ մտքերն արտահայտելու կարողությունը, ինչպես նաև նպաստել ասացվածքների ճիշտ կիրառմանը խոսքում:

Վարժություն 1. **Ամբողջացրո՛ւ տրված ասացվածքները.**

1. ... գնդակով ... նապաստակ չես խփի (1, 2):
2. ... անգամ չափի՛ր, ... անգամ կտրի՛ր (7, 1):
3. Հարևանիդ կամեցի՛ր ... կով, որ Աստված քեզ տա ... կով (1, 2):
4. ... խելքը լավ է, ... `ավելի (1, 2):

Ակնառու է, որ այս ասացվածքներն ունեն դաստիարակչական բնույթ. առաջինն զգուշացնում է ագահությունից ու անհնարին նպատակի հետևից վազելու անօգտակարության, երկրորդը՝ զգուշավորության ու խոհեմության մասին, երրորդը սովորեցնում է բարի լինել մարդկանց նկատմամբ, չորրորդը խորհուրդների կարևորության, համախոհության ու համագործակցության արժեք է կրում:

Վարժություն 2. **Դարձվածքները և համապատասխան բացատրությունները միացրո՛ւ գծով.**

|                         |                                       |
|-------------------------|---------------------------------------|
| <i>ընկած-ելած</i>       | <i>ապշել, որևէ բանից գլուխ չհանել</i> |
| <i>թունավոր լեզու</i>   | <i>կյանքի մեծ փորձ ունեցող</i>        |
| <i>իրար երես նայել</i>  | <i>տխուր, խոժոռ դառնալ</i>            |
| <i>հոնքերը կախել</i>    | <i>չարախոս մարդ</i>                   |
| <i>կրակի մեջ ընկնել</i> | <i>վտանգավոր վիճակի մեջ հայտնվել</i>  |

Մեր նպատակն էր այս վարժության միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները դարձվածքների վերաբերյալ, ինչպես նաև խոսքը և մտքերն արտահայտելու կարողությունները:

Այս և նման այլ դարձվածքները մեր խոսքը դարձնում են պատկերավոր ու հազեցած: Այսպես՝ «թունավոր լեզու» կապակցությունն ընդգծում է խոսքի ուժը, որը կարող է վիրավորել, «իրար երես նայել»-ը ցույց է տալիս շփոթմունքը, «հոնքերը կախել»-ը տխրելու իմաստ է արտահայտում, «կրակի մեջ ընկնել»-ը փոխանցում է

վտանգի, ծանր իրավիճակի իմաստ: Այս բոլոր դարձվածքներն ապացուցում են, որ հայերենը հարուստ է պատկերավոր խոսքերով, որոնք մի քանի բառով արտահայտում են բարդ մտքեր, զգացումներ, դատողություններ:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում համոզվել ենք, որ դարձվածքների ու ասացվածքների ուսումնասիրումն արդյունավետ է հատկապես 2-րդ, 3-րդ դասարաններից սկսած, քանի որ դրանք նպաստում են ինչպես բնագրի գաղափարի ընկալմանը, այնպես էլ սովորողների մտածողության և խոսքի զարգացմանը: Նշենք, որ կիրառվող մեթոդների բազմազանությունը հնարավորություն է տալիս հաղթահարելու թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների դժվարությունները:

Մեր ուսումնասիրությունները նաև ցույց տվեցին, որ դարձվածքների և ասացվածքների ուսումնասիրումը տարրական դպրոցում ընձեռում է ոչ միայն լեզվական գիտելիքի ձեռքբերման հնարավորություն, այլև նպաստում է դաստիարակչական խնդիրների լուծմանը: Դրանց ուսումնասիրումը նպաստում է նաև սովորողների ազգային ինքնագիտակցության և խոսքի զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը: Բացի սովորողների լեզվամտածողության զարգացմանը նպաստելուց՝ դարձվածքները և ասացվածքները կարևոր դեր ունեն նաև նրանց քննադատական ու ստեղծագործական մտածողության ձևավորման գործում. սովորողներին հնարավորություն են տալիս ոչ միայն իրենց խոսքում կիրառել պատկերավորման միջոցները, այլև խորապես հասկանալ դրանց իմաստը՝ կապելով առօրյա կենսափորձի և ազգային մշակույթի հետ:

Այս գործընթացում մասնավորապես կարևոր է, որ ուսուցիչները մշտապես որոնեն և կիրառեն նորարարական մոտեցումներ, մշակեն և կիրառեն հետաքրքիր և հասանելի առաջադրանքներ, որոնք կնպաստեն սովորողների ակտիվ մասնակցությանը և դասագործընթացը կվերածեն ոչ միայն ուսումնական, այլև արժեքների դաստիարակության արդյունավետ հարթակի: Դարձվածքները և ասացվածքները պետք է դիտարկվեն որպես ազգային ինքնության, մարդկային փորձի և հոգևոր արժեքների փոխանցման կարևոր միջոց, որոնց ուսումնասիրությունը դպրոցում հնարավորություն կտա համադրել ուսուցման և դաստիարակության նպատակները:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Եր., ՅՍՄՐ ԳԱԱ, 1981, էջ 373:
2. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2007, 378 էջ:

**SUMMARY**  
**THE OBSERVATION OF IDIOMS AND PROVERBS AS A KEY TO**  
**PERCEPTION OF THE IDEA OF TEXT**

**Safaryan Nushik, Avagimyan Arine**

The study revealed that learning idioms and proverbs in elementary school is significant not only linguistically but also educationally. They foster students' speech development, strengthen their value system, and contribute to the formation of national identity.

**Keywords:** *idioms, proverbs, national language thinking, value system, practical method, theoretical method, analytical method, figurative speech.*

**ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**  
**ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ**  
**ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՔՈԼՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ**

Երևանի թիվ 140 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Էլ. հասցե՝ [gayaneqoloyan@gmail.com](mailto:gayaneqoloyan@gmail.com)

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Մոդելավորման մեթոդը լայն կիրառություն ունի տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Այն նպաստում է մաթեմատիկայի հետ միջառարկայական կապերի ապահովմանը, մի շարք ուսումնական խնդիրների լուծմանը, տեսական և գործնական մոտեցումների համդրմանը և այլն:

**Բանալի բառեր՝** *մոդելավորման մեթոդ, խնդրի մոդելավորում, տեքստային խնդիրներ, թվային արտահայտություններ, կրտսեր դպրոցական:*

Մաթեմատիկական մոդելավորումը նշանային մոդելավորման մի տեսակ է՝ հետազոտական մեթոդներից մեկը, որի միջոցով հետազոտության օբյեկտի մասին

հայտնի փաստերն արտապատկերում են ինչ-որ հարաբերությամբ օբյեկտին իզոմորֆ կամ հոմոմորֆ որևէ մաթեմատիկական ձևով բանաձևեր, դիֆերենցիալ հավասարումներ, բազմության խմբեր և այլն: Օրինաչափությունների հետագա ուսումնասիրումն իրականացվում է այդ մոդելի ձևափոխության ու վերլուծության միջոցով. այն մոդելի կառուցման և նրա հետազոտման գործընթացն է [7, 11-53]:

Անառարկելի է, որ մաթեմատիկայի ուսումնասիրման համար կրտսեր դպրոցական տարիքն ամենազգայուն ժամանակաշրջանն է: Այն մասնավորապես բարենպաստ է կառուցման վերաբերյալ կարողությունների յուրացման համար և բացատրվում է կյանքի այս փուլին բնորոշ տարիքային առանձնահատկություններով՝ ակտիվության բարձրացում, ընթերցանական ցանկություն, վարքագծի կամայական կարգավորումների զարգացման որակապես նոր մակարդակ, անդրադարձում, գործողության ներքին պլանի մշակում, տարեկիցների վրա կենտրոնացում և մտածողության զարգացման գործընթացի առանձնահատկություններ, որոնք անցնում են պատկերավոր որոշակի օբյեկտների կամ դրանց փոխարինող մոդելների և հասնում մինչև վերացական թվային արժեքները:

Հայտնի է, որ հանրակրթությունն սկսելուն զուգահեռ՝ սկսում է ավելի արագ զարգանալ սովորողների տրամաբանությունը, կամաժին ուշադրությունը, որոշ հասկացություններ կիրառելու ունակությունը: Կրտսեր դպրոցականի տրամաբանական-վերացական մտածողության զարգացման արդյունավետությանը նպաստում է մոդելավորման տարրերի տիրապետումը, հետևաբար, ուսումնական գործընթացի սկզբնական փուլերում շատ կարևոր է, որ սովորողներն ուսումնասիրվող իրավիճակը պատկերացնեն որպես մոդել:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մոդելները նպաստում են սովորողների մտածողության, երևակայության, տրամաբանության, կամաժին հիշողության, կապակցված խոսքի, ինչպես նաև մաթեմատիկական լեզվի զարգացմանը:

Անառարկելի է, որ խնդրի մոդելավորումը հնարավոր է իրականացնել մաթեմատիկայի յուրաքանչյուր դասի ընթացքում՝ հիմք ընդունելով ուսումնասիրվող թեման, նյութի ուսուցման նպատակները և աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

Տարրական դպրոցում մոդելների կիրառումը նպաստում է ոչ միայն կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողության զարգացմանը, այլ նաև նրանք սովորում են մտածել և խոսել մաթեմատիկորեն, մաթեմատիկական լեզվով: Դրանց

կիրառումը ոչ միայն մաթեմատիկայի դասերը հետաքրքիր է դարձնում, նպաստում խնդրի արագ և առանց դժվարության լուծմանը, այլև ընձեռում է սովորողների ստեղծագործական և վերացական մտածողության զարգացմանը նպաստող հնարավորություններ:

Անառարկելի է, որ մաթեմատիկական խնդիրների լուծման հիմնական պայմանը սովորողների կողմից տեղեկույթի ճիշտ ընկալումն ու մշակումն է: Առաջին իսկ քայլերից նրանք պետք է հասկանան, որ հնարավոր չէ մաթեմատիկական խնդիրը լուծել առանց խնդրի բովանդակության ճիշտ ըմբռնման: Հայտնի է, որ ուսուցման սկզբնական շրջանում մաթեմատիկական խնդիրները գլխավորապես լուծվում են զննական պարագաների կիրառմամբ, քանի որ կրտսեր դպրոցականների մտածողությունը կոնկրետ է՝ զննական-առարկայական, իսկ մտածողության զննական-առարկայական ձևից վերացականին անցման շրջանի դժվարությունները հաղթահարելու համար խնդիրը բացատրվում է՝ կատարելով համապատասխան գծագիր, իսկ եթե կան նկարներ, ապա դրանց ցուցադրման միջոցով: Այնուհետև իրականացվում է խնդրի համառոտագրում, կազմվում լուծման պլան: Հետագայում համառոտագրումը կատարվում է առանց զննական պարագաների: Ուսումնական գործընթացում խնդիր լուծել նշանակում է ոչ միայն պատասխանել առաջադրված հարցին, այլ նաև դիտարկել պայմանից պահանջին անցնելու գործընթացն այնպես, որ սովորողներին հասկանալի լինի:

Խնդիրներ լուծելու կարողության զարգացման նպատակով սովորաբար իրականացվում է պարզ խնդիրների շուրջ տարատեսակ աշխատանքներ: Օրինակ՝ կազմել տրված խնդրի հակադարձը, ուղղակի ձևով արտահայտված խնդիրը դարձնել անուղղակի ձևով արտահայտված և այլն: Նշենք, որ բաղադրյալ խնդիրները լուծելիս դրանք տրոհում ենք պարզ խնդիրների: Ընդհանրապես խնդիրների շուրջ աշխատանքներում մեծ տեղ է հատկացվում մոդելավորմանը: Նշենք, որ մոդելավորումը չի հակասում խնդրի բովանդակության համառոտագրմանը կամ զննական տեսանկյունից պատկերացմանը: Այն մտովի կամ հատուկ կառուցված համակարգ է, համախումբ, որը հստակորեն արտացոլում է խնդրի բովանդակությունը:

Մեր մանկավարժական փորձով համոզվել ենք, որ պարզ խնդրի բովանդակության վերլուծությունը, համառոտագրումը (մոդելի կառուցում), լուծման պլանի կազմումը սովորողների համար առանձնակի դժվարություն չեն ներկայացնում, սակայն բաղադրյալ խնդիրների դեպքում այդ գործընթացը բարդ է: Այս փուլում պարզաբանվում է, թե ի՞նչ տվյալներ են հայտնի խնդրի պայմանում, ի՞նչ կապ կա

տվյալների, ինչպես նաև դրանց և անհայտ մեծության միջև, ինչ է պահանջվում խնդրում [1, 11-24]:

Սովորողներն այդ բոլորի մասին պետք է հստակ պատկերացում ունենան, որպեսզի կարողանան կառուցել խնդրի լուծման մոդելը: Սկզբնական շրջանում այդ աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ուսուցիչը, սակայն հետագայում պետք է հասնել նրան, որ աշակերտներն այն կատարեն ինքնուրույն՝ առանց ուսուցչի մասնակցության:

Խնդրի վերլուծությունը կարելի է կատարել երկու եղանակով՝

- վերլուծական՝ հարցից գնալով դեպի տվյալները,
- համադրական՝ տվյալներից գնալով դեպի հարցը:

Դեռևս առաջին դասարանից սովորողներին պետք է ուղղորդել, որ խնդրի վերլուծությունից հետո (կամ վերլուծության ընթացքում) այն համառոտագրեն, կառուցեն օժանդակ մոդելը: Խնդրի համառոտագրումը կարելի է կատարել տարբեր եղանակով. գրել միայն թվային տվյալները, պատկերել տրամագրի կամ սխեմայի տեսքով, աղյուսակի միջոցով և այլն: Խնդրի բովանդակության համառոտագրությունը սովորաբար պետք է պարունակի թվային և անհայտ տվյալները, որոշ բառեր, որոնք պետք է հուշեն, թե ինչի մասին է խոսվում խնդրում, ինչ առնչության մեջ են գտնվում տվյալները, ինչպես նաև՝ տվյալները և անհայտները: Խնդրի համառոտագրությունը պետք է լինի այնպիսին, որ այն ընթերցելիս սովորողները հասկանան խնդրի բովանդակությունը:


Յուրաքանչյուր խնդրի համար կարելի է կիրառել համառոտագրության մեկ եղանակ: Տարրական դասարաններում ուսումնասիրվող որոշ խնդիրների համառոտագրումը կարելի է կատարել խնդրի բովանդակության վերլուծությունից հետո, սակայն ավելի բարդ խնդիրների դեպքում՝ վերլուծության ընթացքում, որը բովանդակության յուրացման գործընթացը կդարձնի արդյունավետ:[1,33]::

Պարզ խնդիրների ուսումնասիրման սկզբնական շրջանում կառուցելով խնդրի երկրաչափական մոդելը՝ սովորողներն առանց թվաբանական գործողություն կատարելու հաշվում են պատկերված պայմանանշանները և պատասխանում են խնդրի հարցին :

Դավիթն ուներ 4 խաղալիք: Արմենը նրան տվեց ևս 2 խաղալիք: Քանի՞ խաղալիք ունեցավ Դավիթը:

Խաղալիքները կարող ենք պատկերել շրջանների տեսքով:

Շրջանների տեսքով պատկերելով այդ խնդրի մոդելը՝ կունենանք հետևյալ պատկերը.




Հաշվելով շրջանների քանակը՝ սովորողը կպատասխանի.


-Դավիթն ունեցավ 6 խաղալիք:

Հետագայում սովորողներին պետք է բացատրել, որ առարկայական, պայմանական զննական պարագաների քանակը հաշվելուց բացի, խնդիրների լուծման նպատակով պետք է անցնել թվաբանական գործողություններ կատարելուն:

Ժամանակակից տարրական դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում խնդիրների մոդելավորմանը, որը մեծ դժվարությամբ է ընկալվում կրտսեր դպրոցականների կողմից: Օրինակ, եթե խնդրի տեքստում գործածված է **գնացին** կամ **թռան**, **տարան** ... բառերը, ապա սովորողները կարծում են, որ խնդիրը պետք է լուծվի հանման գործողությամբ: Խնդրի լուծման մոդելը կարելի է կազմել տարբեր ձևերով: Այս մետեցումը կնպաստի, որ սովորողները խնդիրը լուծելու համար ընտրեն համապատասխան գործողություն և այն կատարելով՝ ներկայացնեն խնդրի հարցի պատասխանը:



ա)




բ)

Խնդիր 1. Ավտոկայանում կանգնած 13 ավտոբուսներից 6-ը ուղևորվեցին տարբեր երթուղիներով: Քանի՞ ավտոբուս մնաց կանգնած ավտոկայանում:




գ)

Խնդիր համար 2. Ա և Բ քաղաքներից միաժամանակ հանդիպակաց սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա: 3 ժամ հետո նրանք





հանդիպեցին: Ավտոմեքենաներից մեկի արագությունը 60կմ/ժ էր, մյուսինը՝ 70կմ/ժ: Գտնել Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը: *Պատասխան՝ 390 կմ:*

Խնդիր 3. Դավիթն ունի 10 մատիտ, որոնցից 5-ը սև են, 2-ը կանաչ, մնացածը՝ կապույտ: Քանի՞ կապույտ գույնի մատիտ ունի Դավիթը:



Խնդիր 4. Երեք եղբայր միասին գնեցին 9 տետր: Փոքր եղբայրը վերցրեց միջնեկից 1 տետրով քիչ, իսկ մեծը՝ 1 տետրով ավելի քան, քան միջնեկը: Քանի՞ տետր վերցրեցին եղբայրներից յուրաքանչյուրը:



Խնդիր 5. Սովորողները դպրոցի այգում տնկեցին 6 խնձորենի և 4 տանձենի: Ընդամենը քանի՞ ծառ տնկեցին նրանք:

Խնդիրների լուծումից հետո շահեկան է կատարել այսպիսի աշխատանքներ.

- պայմանի փոփոխություն, որպեսզի խնդիրը լուծվի այլ թվաբանական գործողությամբ,
- նոր հարցի ձևակերպում, տարբեր հնարավոր պահանջների ձևակերպում, որոնք կարելի է բավարարել՝ ելնելով պայմանից,
- տրված խնդիրների բովանդակության և լուծման համեմատումը մյուս խնդիրների բովանդակության և լուծման հետ,
- խնդիրների լուծում այլ եղանակով՝ թվաբանական, հանրահաշվական, գրաֆիկական և այլն,

- խնդրում թվային տվյալների այնպիսի փոփոխություն, որը կօգնի բացահայտել խնդրի լուծման նոր եղանակ կամ հակառակը՝ որևէ եղանակը դարձնի անհնարին:

Երբեմն կարելի է հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնք սովորողին չեն պարտադրում խնդիրը նորից լուծել:

- Որոշել տրված խնդրի և աղյուսակի կամ գծագրի միջև համապատասխանությունը: Այսինքն՝ որոշել՝ որքանով է համապատասխանում այս կամ այն գծագիրը խնդրին:
- Ներկայացրած խնդիրներից ընտրել այն, որը համապատասխանում է տրված մոդելին կամ համառոտագրմանը:
- Տրված մոդելներից կամ համառոտագրումներից ո՞րն է համապատասխանում տվյալ խնդրին:
- Որոշել տրված գծագրի կամ աղյուսակի սխալները:
- Տրված խնդիրներից ընտրել կոնկրետ որևէ տեսակի անհրաժեշտ խնդիրը:
- Որոշել այն խնդիրները, որոնց պահանջները կատարելու համար պետք է կատարել թվանբանական գործողություններ՝ տրված հաջորդականությունը:
- Որոշել տրված խնդիրների լուծման թվաբանական եղանակների քանակը: Որոշել, թե քանի թվաբանական եղանակով կարելի է լուծել տվյալ խնդիրը:
- Որոշել խնդրի լուծման մեջ առկա սխալները:
- Լուծել ավելորդ տվյալներով խնդիրներ:
- Լուծել պակաս տվյալներով խնդիրներ:
- Տրված խնդիրներից ընտրել այնպիսիք, որոնք կարելի է լուծել բանավոր:

Տեքստային խնդիրների լուծումը սովորաբար հարուստ նյութ է տալիս սովորողների զարգացման և դաստիարակության համար: Խնդիրների պայմանների հակիրճ գրառումները մաթեմատիկայի սկզբնական փուլում կիրառվող մոդելների օրինակներ են:

Մաթեմատիկական մոդելավորման մեթոդի կիրառումն ընթացքում զարգանում են սովորողների հետևյալ կարողությունները.

- վերլուծություն՝ խնդրի ընկալման և լուծման իրականացման ճանապարհի ընտրություն,
- խնդրում ներկայաված առարկաների միջև հարաբերությունների հաստատում, առավել համապատասխան սխեմայի կառուցում.



վրա աշխատելու փուլ) ընթերցման ժամանակ արժեքների միջև հարաբերությունը արտահայտվում են սխեմատիկորեն :

- Մոդելը կառուցվում է գործողությունների ավարտից հետո: Կատարված գործողությունները գիտակցելու համար անհրաժեշտ է կառուցել առանձին հարաբերությունների սխեմա:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների նախնական մաթեմատիկական մոդելավորման ունակությունը դիտարկվում է որպես հատուկ կարողություն. առանձնացնել ուսումնասիրվող երևույթի, գործընթացի, խնդրային իրավիճակի էական բնութագրիչները, ակնառու պատկերել տրված երևույթը, գործընթացը, իրավիճակը՝ պատկերելով բոլոր առանձացված հատկությունները և հարաբերությունները, այսինքն՝ կառուցել համապատասխան մոդել, խնդիրը լուծել մոդելի շրջանակներում, ստանալ արդյունք, այնուհետև փոխանցել, մեկնաբանել ուսումնասիրվող երևույթին, գործընթացին, իրավիճակին, եզրակացություն ձևակերպել: Այս գործընթացում զարգանում է կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը՝ որպես նրանց անհատականության ընդհանուր բնութագրիչ, որը բաղկացած է մոդելավորման մեթոդների յուրացման հիման վրա մաթեմատիկական գիտելիքների համակարգային և հաջորդական ձեռքբերմամբ:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., Տարրական դասարաններում խնդիրների ուսուցման մեթոդիկան, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, 170 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի ընտրովի գլուխներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, 150 էջ:
3. Մկրտչյան Ս., Մաթեմատիկա 1 դասագիրք- տետր: Մաս -1, Երևան, 2025, 100 էջ:
4. Մկրտչյան Ս., Մաթեմատիկա 1 դասագիրք- տետր: Մաս -2, Երևան, 2025, 100 էջ:
5. Մկրտչյան Ս., Մաթեմատիկա 4 դասագիրք: Մաս-1, Երևան , 2025, 112էջ:
6. Մկրտչյան Ս., Մաթեմատիկա 4 դասագիրք: Մաս-2, Երևան , 2025, 112էջ:
7. Самарский А.А., Михайлов А.П., Математический моделирование: Идеи. Методы. Примеры. М. - Наука, 1997-320 с.

**SUMMARY**  
**APPLICATION OF THE MODELING METHOD IN THE PROCESS OF TEACHING**  
**MATHEMATICS AT ELEMENTARY GRADES**

**Koloyan Gayane**

The article presents the usage of modeling method in the process of teaching mathematics in elementary grades. The usage of modeling method takes a chance to combine not complicated mathematical patterns, to do own conclusions.

**Keywords:** *modeling method, problem modeling, textual problems, numerical expressions, primary school student.*

**ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈԼՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱՎ ՅԱՐՑԱԽՈՒՅՉԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ ԿԻՄԱ**

*Երևանի Ա. Նավասարդյանի անվ. 196 հմ. դպրոցի ուսուցչի օգնական*

*Էլ. հասցե՝ [Kikahovhannisyan@mail.ru](mailto:Kikahovhannisyan@mail.ru)*

**ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԶՈՒԼԻԵՏԱ**

*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՅ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

*Էլ. հասցե՝ [gyulamiryanjulieta42@aspu.am](mailto:gyulamiryanjulieta42@aspu.am)*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացրել ենք վեց տարեկանների ուսումնաճանաչողական հետաքրքրությունների վերաբերյալ ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծությունը: Բացահայտել ենք, որ վեց տարեկանների ուսումնաճանաչողական հետաքրքրությունների բավարարումն առնչվում է ուսուցիչների մեթոդական ու կազմակերպչական դժվարությունների, ինչպես նաև սովորողների հոգեբանական ու լեզվական առանձնահատկությունների հետ:


**Բանալի բառեր՝** ուսումնաճանաչողական հետաքրքրություններ, տարրական դասարան, վեց տարեկաններ, ուսուցման մեթոդներ, գրաճանաչություն, այբբենարան:

Հայաստանի Հանրապետությունում գործող այբբենարանների միջոցով առաջին դասարանցիների ուսումնաճանաչողական հետաքրքրությունների բավարարման գործընթացի վերաբերյալ տարրական դասարանների ուսուցիչների կարծիքների ուսումնասիրման նպատակով հարցախույզ իրականացրինք տարրական դպրոցի 53 ուսուցչի շրջանում:

Մեր ուսումնասիրությունն իրականացրել ենք 2023-24 ուսումնական տարում, տարրական դպրոցում նշված ժամանակահատվածում գործում էին 2 այբբենարան՝ Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան [7] և Վ. Սարգսյան [66], այդ պատճառով հարցախույզին մասնակից ուսուցիչների պատասխանները վերաբերում են դրանց:


Հարցաթերթիկը կազմված էր 6 հարցից: Նրանց կից տվել էինք նաև պատասխան-տարբերակներ:

Հարցաթերթիկի առաջին հարցով մեզ հետաքրքրում էր, թե ո՞ր դասարանում են դասավանդում հարցախույզին մասնակից ուսուցիչները: Պարզեցինք, որ հարցախույզին մասնակից 53 ուսուցիչների 36%-ը դասավանդում է 1-ին, 26% -ը՝ 2-րդ, 28% -ը՝ 3-րդ, 10%-ը՝ 4-րդ դասարաններում:




Տրամագիր 1

Հարցաթերթիկի երկրորդ հարցով մենք պարզեցինք, թե ուսուցիչները ՀՀ-ում գործող ո՞ր այբբենարանով են աշխատում: Հարցախույզի արդյունքները ցույց տվեցին, որ հարցախույզին մասնակից ուսուցիչների 64%-ն աշխատում է Վ. Սարգսյանի, իսկ 36%-ը՝ Ա. Քյուրքչյանի, Լ. Տեր – Գրիգորյանի հեղինակած այբբենարաններով:



Տրամագիր 2


Հարցաթերթիկի երրորդ հարցով մենք ուսուցիչներին խնդրել էինք հինգ բալային սանդղակով գնահատել իրենց ընտրած այբբենարանների հնարավորությունները կրտսեր դպրոցականների ուսումնաճանաչողական հետաքրքրությունների բավարարման տեսանկյունից: Մասնակից ուսուցիչների 17%-ը գնահատել էր 3, 47% -ը՝ 4, 36%-ը՝ 5 **միավորներով**: Ըստ ուսուցիչների տված պատասխանների՝ ՀՀ-ում գործող այբբենարանները հիմնականում բավարարում են վեց տարեկանների ուսումնաճանաչողական հետաքրքրությունները:



Տրամագիր 3

Այն հարցին, թե ՀՀ-ում գործող այբբենարանները բավարարում են վեց տարեկանների ուսումնաճանաչողական հետաքրքրությունները, ուսուցիչների տրված պատասխաններից պարզ դարձավ, որ նրանց մեծամասնությունը՝ 56% -ը, գտնում է, որ բավարարում են, 23% -ի կարծիքով մասամբ են բավարարում, իսկ ըստ 21%-ի չեն բավարարում:


4. Ձեր կարծիքով՝ գործող այբբենարանները բավարարում ենվեց տարեկանների ուսումնաճանաչողական հետաքրքրությունները



Տրամագիր 4

Ցավոք, այս հարցին կից տրված պատասխան-տարբերակներում մենք չէինք նշել «Հիմնավորե՛ք Ձեր պատասխանը» տարբերակը, սակայն մեր փորձարարական դասարանների ուսուցիչների շրջանում իրականացրած գրույցի ժամանակ հիմնականում հնչեց այն կարծիքը, որ ուսուցիչներն այբբենարանի նյութերի շուրջ աշխատելիս իրենք պետք է կարևորեն նշված խնդիրը և մեթոդապես ճիշտ կառուցեն իրենց աշխատանքը: Այբբենարանների ցանկացած նյութի շուրջ ճիշտ և նպատակային կազմակերպված աշխատանքը, անշուշտ, կնպաստի առաջին դասարանցիների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանն ու բավարարմանը:

Մեզ հետաքրքրում էր նաև, թե ուսուցիչներն ի՞նչ մեթոդներ են կիրառում այբբենարանի նյութերի միջոցով առաջին դասարանցիների ճանաչողական



Տրամագիր 5

Այս հարցին կից մենք առաջադրել էինք հինգ պատասխան-տարբերակ՝ առաջարկելով ընտրել դրանցից մի քանիսը:

Ընտրության արդյունքներն այսպիսին էին.

1. Չնական մեթոդներ՝ 25%: Սա ամենաշատ կիրառվող մեթոդն է, ինչը տրամաբանական է. վեց տարեկանները առավել արդյունավետ են սովորում տեսողական ընկալման միջոցով: Այբբենարանի պատկերները, վառ գույները, նկարազարդումները կարևոր միջոց են դառնում այդ հարցի լուծման ընթացքում:
2. Էքսկուրսիաներ՝ 22%, խմբային աշխատանք՝ 22%: Նշված մեթոդների ընտրությունը ցույց է տալիս, որ ուսուցիչները գիտակցում են զննականության դերը և փորձում են ուսումնական գործընթացը դարձնել ավելի գործնական և նպաստել սովորողների սոցիալականացմանը:
3. Փոխներգործուն մեթոդներ՝ 19%: Այս ընտրությունը մատնանշում է, որ որոշ ուսուցիչներ առաջնահերթություն են տալիս ակտիվ ուսուցման մեթոդներին, որոնց կիրառումն ապահովում է սովորողների ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը:
4. Էլեկտրոնային խաղեր՝ 12%: Նշված ցածր տոկոսը վկայում է կամ տեխնիկական հնարավորությունների պակասի մասին, կամ էլ ուսուցիչները դեռևս բավարար չափով չեն ինտեգրում տեխնոլոգիաները այբբենարանով աշխատելու գործընթացում:

## 5. Այլ պատասխաններ՝

**Դիդակտիկ նյութերի կիրառում:** Սա կարևոր դիտարկում է, քանի որ մեր դասալսումների ժամանակ համոզվել ենք, որ ուսուցիչները լրացուցիչ նյութեր են կիրառում՝ լրացնելու համար այբբենարանում առկա բացերը:

**Այբբենարաններում կիրառված մեթոդների և հնարների հստակեցում:** Այս առաջարկը ցույց է տալիս, որ ուսուցիչները ցանկանում են, որ դասագրքում ներառված լինեն հստակ մեթոդական ուղղորդումներ, ինչը նրանց կօգնի ավելի արդյունավետ աշխատել:

Այսպիսով՝ ուսուցիչները կիրառում են բազմազան մեթոդներ, սակայն առավելապես նախընտրում են գնական մեթոդները, էքսկուրսիաները և խմբային աշխատանքը, իսկ SS միջոցների կիրառումը, ցավոք, դեռևս լայն տարածում չունի տարրական դպրոցում: Ուսուցիչներն առաջարկել են, որ այբբենարանի մեթոդական ուղեցույցում ավելի հստակ և ծավալուն ներկայացվեն նման միջոցները: Սա նշանակում է, որ դասագրքերը դեռևս բավարար աջակցություն չեն տալիս մեթոդաբանության տեսանկյունից:

Հարցաթերթիկի 6-րդ հարցով ուսուցիչներից խնդրել էինք ներկայացնել առաջին դասարանում այբբենարանների նյութերի միջոցով վեց տարեկանների ճանաչողական հետաքրքրությունների բավարարման գործընթացում իրենց և սովորողների դժվարությունները:

**Ուսուցիչների դժվարությունները բազմաթիվ են: Նշենք դրանցից մի քանի էականները:**

- Ուսումնասիրվող թեմային համապատասխան՝ չկան դիդակտիկ պարագաներ, պաստառներ, որոնք ավելի հետաքրքիր կդարձնեն աշխատանքը, կգրավեն սովորողների հետաքրքրությունները: Ողջ դժվարությունները մնացել են ուսուցչի ուսերին,
- SS միջոցների անբավարարությունը,
- դժվարություններ չկան, դասագիրքը պատճառ չի կարող լինել, եթե ուսուցիչը լավ է պատկերացնում իր անելիքը: Խնդրում ենք նոր և կասկածելի ծագումով դասագրքեր, առավել ևս՝ Այբբենարաններ չառաջարկել,
- սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին ծնվածներն ակնառու փոքր են, ու դժվար է գործընթաց մեթոդապես ճիշտ կազմակերպել,
- լիովին զարգացած չեն սովորողների ճանաչողական հետաքրքրությունները,

- դժվարությունները հաղթահարում ենք լրացուցիչ աշխատանքի շնորհիվ, որը բավականին բարդ է,
- համակարգիչների բացակայությունը որոշակի դժվարություններ են առաջացնում.
- ավելի լավ է շեշտը դնել լեզվական նախագիտելիքների վրա,
- գրաճանաչությանը տրամադրած ժամանակը քիչ է,
- այբբենարանի նյութերի հետաքրքրության պակասը,
- աշակերտների քանակը դասարանում մեծ է,
- ուսումնական նյութերի բարդությունը,
- անահատական աշխատանքի իրականացման դժվարությունները բազմամանուկ դասարաններում,
- 6 տարեկան երեխաները դեռևս ուսումնական գործունեությանը պատրաստ չեն,
- դասարանում ԱՌՊ – ով երեխաների ներկայությունը,
- Նոր չափորոշիչների համապատասխան դասագրքի ստեղծումը,

#### **Աշակերտների դժվարությունները:**

- կամաժին ուշադրության ցածր մակարդակը,
- սովորողների ճանաչողական հետաքրքրությունների սահմանափակությունը,
- ներկայիս սերունդն ունի ընկալման խնդիր, որը մեծ ջանք ու եռանդ է պահանջում ուսուցչից: Սովորողների մեծ մասը չի կենտրոնանում, որը բացասաբար է ազդում ուսման որակի վրա: Չկա գնահատական, չկա սովորելու դրդապատճառ,
- կապակցված խոսք կառուցելու կարողության անբավարար մակարդակը,
- հնչյունային լսողության ոչ բավարար մակարդակը,
- հարմարվելը դպրոցական կարգ ու կանոնին:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ:
2. Գյուլամիրյան Զ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, «Չանգակ» հրատ., Երևան, 2018:
3. Սարգսյան Վ., Այբբենարան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2012, 136 էջ:
4. Սարգսյան Վ., Այբբենարան, Ման Մար, 2022, 156 էջ:
5. Բյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2022, 128 էջ:

## SUMMARY

### ANALYSIS OF THE RESULTS OF THE SURVEY CONDUCTED AMONG TEACHERS ON THE ACADEMIC INTERESTS OF SIX-YEAR-OLDS

Hovhannisyan Kima, Gyulamiryan Julieta

